ՎԱՀԱՆ ԴԱՔԵՍՅԱՆ

# Հայրենի



# ՀՈՂԻՆ ՎՐԱ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

10243
891.99
…28
Դավթյան Վ.
…ն հողին մրս.
5կ.

ՎԱՀԱՆ ԳՈՔԵՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ է 1951 թ.

# ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ՛Ն ՎՐԱ

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 1947

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Արենք հրատարակած «Հանգրվաններ» հատորիս ընտրած եմ մաս մը գործեր: Եւ Սովետական Հայաստանի մեջ գրածներուս հետ, կազմած եմ ներկա ժողովածուս

Ժողովածուն ունի երկու բաժին՝ «Հայրենի Եզեր» և «Ճեղյանքներ»: Առաջին-ածնի մեջ զետեղված են Սովետական Հայաստանի, իսկ երկրորդին՝ արտասահմանի Հունաստանի) մեջ գրածներս:

Վ. Դ.

Երևան 22/I 47 թ.

В. ДАГЕСЯН
НА РОДНОЙ ЗЕМЛЕ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1947

# ՀԱՅՐԵՆԻ ՔՆԱՐ

# ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Աշխարհն ամբողջ իր հայացքը քե՜զ հառած՝
Անձրևեն վերջ բույսերն ի՛նչպես արևին,
Երջանկության կենսավիշով են վառված,—
Մե՛ծ Առաջնորդ, ազատությա՜ն պայքարին։

Հուսալքված մարդկության դուն կյա՜նք տվիր,
Ստեղծագործ աշխատանքին՝ նոր վերելք,
Լույս հանճարիդ ճառագայթներն՝ զերդ հրթիռ՝
Թափանցեցին մինչ Արևմո՛ւտք, Արևե՛լք։

Թափառական հայ պոետիս ալ տվիր
Երջանկությո՜ւն՝ հայրենիքիս մեջ ազատ,
Ու հայրենիք՝ ժողովուրդիս տարագիր,
Ու հոգվույս հուր, թռի՜չք տվիր լուսացա՛յտ։

Հավերժական փառքդ անծիր, անըրվա՜ճ,
Սիրտըս սրինգ ըրած կերգեմ կաթոգին,
Հաղթանակի դո՛ւն ախոյան մեծասքա՜նչ,
Մե՛ծ Ստալին, մեր Առաջնորդ թանկագին։

Երևան, 8. 4. 47

# ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

*Քառասունքես հետո դարձյալ մորըս կաթը ես խմեցի,*
*Խանդաղատանք ստինքներն իր շրթունքներուս մեջ սեղմեցի,*
*Ու ծծեցի՜ ես այի՛նդ այնքա՜ն, բայց շարժակեց ան ճիշ ցավի,*
*Այլ բերկրալի, կարոտակեզ ուժգին սեղմեց կուրծքին ինծի։*

*Ես անծանոթ էի իրեն, ինքն ալ ինծի դեռ չէր տեսած,*
*Մեծ մրրիկին մեջ մենք զիրար լալով էինք կորսնցուցած,*
*Ես դեռ մանուկ ու մոլորուն, օտար գիրկեր էի ինկած,—*
*Խորթ մայրեր իսկ չէին անոնք, այլ ավե՜լի անհարազատ։*

*Սրտիս խորքին ես շարունակ կզգայի սերն իր մայրական,*
*Այդ տե՛նդն էր միշտ իմ հոգվույս մեջ, ու այդ սե՜րը՝ հրաշուշան,*
*Իմ տենչանքն էր գտնել զինքը ու միանա՜լ միանգամայն,*
*Գիտեի թե ձեռք մը բարի ատուդ մահեն փրկած էր զայն։*

*Ձեռքն էր այդ ռո՜ւս ժողովուրդին՝ մե՛ծ բարեկամ, մե՛ծ ու բարի,*
*Դարձյալ ձե՜ռքն էր այդ միևնո՜ւյն, որ միացուց մայրս ու ինծի։*
*Գեղեցկացա՜ծ է մա՜յրս հիմա, ու թարմացած հո՛ւժ դեռատի,—*
*Հայրենիքս է իմ հարազատ, Սովետական Մա՜յր Հայաստա՜ն։*

Երևան, 17. I. 47

# ՍԵՄԻՆ ՎՐԱ

*Հակաֆաշիստական և ազատագրական պայքարի*
*հունահայ գրողներուն*

*Կանգնած ահա՛ հայրենիքիս սեմի՜ն ամուր,*
*Ու Լենինյան դրոշին տակ հավերժալույս,*
*Սիրտս բացած գարուններո՜ւն հազարաբույր,*
*Կերգեմ հիմա և՛ հաղթանակ, և՛ խնդություն։*

*Երգերս իրենց երանգն կառնեն մեր լեռներեն*
*Ամպասլա՜ց, մեր դաշտերեն հազարադո՜ւյն,*
*Մեր գետերեն արագընթա՜ց, ու հոգիեն*
*Մեր ամրակո՜ւռ, որ դիմացավ հարվածներուն։*

*Ու մեր հոգին անգա՜մ մըն ալ փորձըվեցավ,*
*Հայրենական պատերազմին. ան միացավ*
*Դյուցազներեն ազատատենչ մարդկության հետ՝*
*Ոսոխին դեմ աշխարհավեր ու չարանենգ։*

*Նահատակնե՜ր մեր, բյուրավո՛ր, Թամաշիրի՜մ,*
*Դո՛ւք ամե՜ն տեղ հայրենիքի սիրով վառված,*
*Ազատության դատին համար մի՛շտ անվեհեր,*
*Հաղթանակի խոր հավատքով ինկա՜ք խիզախ։*

*Հայրենիքը հիշե՜ պիտի հավերժ ձեզի,*
*Պիտի կանգնին հուշարձաններն ձեր սխրալի,*
*Հայրենիքի սրբազնագույն հողին վրա,*
*Իբրև ավա՜նդ, ՝անմա՜ր փարոս գալիքներուն։*

Հիշատակն ձեր մեր սրտերուն մեջ քանդակած,
Արդ բերած ենք Հայրենի՛ք, ու, օծենք պիտի
Հայրենիքի վեհ բույրերո՛վ, հողո՛վ, ջուրո՛վ,
Մեր սարերու լանջե՛ն շշող զեփյուռներով։

Պիտի հյուսենք ձեզի համար տաղեր լուսե,
Աչքիկներն մեր սրտաղեղուն երգեն պիտի,
Հավերժին մեջ հոգիներն ձեր լուսաթրթիռ,
Մեր սարերուն պիտ՝ այցի գա՛ն ամեն առտու։

Հայրենիքիս սեմին կանգնած կերգեմ հիմա,
Ստալինյան հաղթանակով հավերժալույս,
Դյուցազնատիպ հիշատա՛կն ձեր սրտիս սեղմած,
Կհամբուրե՛մ դափնեպսակն ձեր ճակատին։

Երևան, 22. 1. 47

# ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁԱԾՆԵՐՈՒՆ

Անհանգրվան թափառումե, ապառումե հեռու դուք,
Վերադարձա՛ք հայրենիք, ու վերադարձաք հուսավառ,
Պանդխտության լեղին սեղմած ձեր կոկորդին իբրև թուք,
Հին աշխարհին բողոք դարձած, աշխարհի՛ն դեմ անարդար։

Քուլա, քուլա վրեժի բո՛ց՝ սրտերուն մեջ ձեր հնոց,
Ձեր դարավոր տառապանքը նյութողներուն դեմ ահեղ,
Մինչ երախտիք, սիրո անհուն զգացումներ հորդահոս,
Կը կարկաչեն ձեր սրտերեն սովետներուն հանդեպ վեհ։

Վերադարձա՛ք հանգրվանը ձեր պապերուն դարավոր,
Անհյուրընկալ երկիրներեն, նախատինքեն օտարին,
Ու ամրացած կամքերը ձեր հայրենիքին մեջ հզոր,—
Ձեր վիրավոր սրտերուն մեջ հույսի վարդեր կծաղկին։

Պիտի հոսի ձեր քրտինքն արդ՝ հայրենիքի վերելքին՝
Արագածեն հայացքը ձեր Մասիսներուն մի՛շտ հառած,
Ու Սևանեն դեպ՝ Վանա ծով նոր ջրանցքնե՛ր ձեր մտքին,
Այրարատյան դաշտին հիմա, Մշո դաշտի՛ն կարոտցած։

Սովետական մեծ Միության քաղաքացի՛ եք դարձած,
Ու խառնըված հիմա դո՛ւք ալ գյուղացներու փաղանգին,
Ստեղծագործ աշխատանքի հուրով վառված ձեր հոգին,
Լույս ապագան պիտի կերտեք, արևներեն հո՛ւր առած։

Թումբերն ամեն խորտակված են, պիտի քալեք դեպ առա՛ջ,
Հզորացած սովետական եղբայրության դաշինքով,

Հաղթերգը ձեր արձագանքե բյուր սրտերեն անհատաչ,—
Գոռան պիտի արդարության ալիքները շառաչով։

Ո՛րդ, խնդությո՛ւն մեր լուսառատ հայրենիքին մեջ ազատ,
Կոճիռները ձեր ճակատին՝ անհետացե՜ր են արդեն,
Եղբայրներուն ձեր մնացած, եղբայրներո՜ւն հարազատ,
Նոր թափ կուտաք ձեր կորովին, ձեր եռանդին առնական։

Երևան, 1. I 47

# ԵԿԱՆՔ

Տարբերներեն հեռակա, երկիրներեն խայտաբղետ,
Քաղաքներեն՝ մեծ—մխոր, ու մայթերեն այդ օտար։
Եկանք երամ առ երամ՝ հիսուն հազար խլյակներ,
Հայրենիքին դարավոր, հայրենիքին մեր ազատ։

Եկանք ուրախ երգերով, ձգտումներով բոցավառ,
Հայրենիքին հաղթական, սովետական և հզոր,
Ուր ծաղկեր են տաղանդներ ու կամքերը՝ պողպատվեր,
Աշխատանքի քրտինքով գորշ լեռներն իսկ ոռոգվեր։

Եվ բացվեր են ջրանցքներ օձագալար, գյուղե գյուղ,
Պողոտաներ լայն, ասֆալտ՝ թիկնապահված ծառերով,
Երկշարք շենքեր քարաշեն, բարձր ու փարթամ գունագեղ,
Ու ֆաբրիկներ ծխացող—ճարտարարվեստ աճող մեր։

Վերածնված խոր սուգեն հայրենիքին մենք եկանք,
Մեզ ընդունեց գրկաբաց, ջերմալի կարոտով,
Որպես մայր մը հարազատ—որդեկորույս, խելագար—
Կուրծքին սեղմեց, համբուրեց ուրախության արցունքով։

Ծիծաղ ու խինդ ամեն կողմ—հայ աշխարհին հարսանիք —
Ազգային մեծ հավաք, Ստալինյան դարուն մեր,
Հեռանկար լուսավոր արդ կբացվի մեր առաջ,
Պիտի քալենք անվարան, սիրտ ու հոգի խանդելով։

Ունինք կուլտուրա դարավոր, ստեղծագործ ժողովուրդ,
Բանա՞կ ունինք հաղթական—ազատության ախոյան,
Մե՛ծ Առաջնորդ հանճարեղ—գուրգուրոտ հայր, մեզ համար
Պիտի երգենք հիմա մենք, դարերու երգն անավարտ։

Երևան, 14. 12. 46

# ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ ՎՐԱ

*Օրորոցես մինչ երազած ու երգած եմ ա՛յնքան քեզ,*
*Ու անփական ողջ աչքերով միշտ ուզած եմ տեսնել քեզ,*
*Մեր հրեղեն երազներուն, ձգտումներուն բո՛ցն անմար,*
*Հողիդ վրան կանգնած հիմա սիրտս ընծա կուտամ քեզ։*

*Վտարանդի զավակներեդ մին ալ ես եմ եկած քեզ,*
*Անհունորեն երջանկացած ու տեսնելով հպարտ քեզ,*
*Հզոր թևերդ լայն հովանի՝ զավակներուդ քու պանդուխտ,*
*Գիրկդ լա՜յն բաց, բա՜ց համորեն՝ ամեն կողմեն կուգան քեզ։*

*Հոգվույս հուրով, սրտիս սիրով, վառ-լարերով կերգեմ քեզ,*
*Հողեդ ավյուն, ջուրեդ արյուն առած հիմա կերգեմ քեզ,*
*Մեր դարավոր տառապանքի ողբանչներն մեջն երգերուս,*
*Դավիթի հաղթ թուրը դարձած իմ քնարով կերգեմ քեզ։*

*Ի՞նչ բառեր ալ շարահարեմ դեռ կարող չեն պատմել քեզ,*
*Հողիդ բույրին խոր զգացած արբեցո՛ւմս հայտնել քեզ,*
*Դու Մասիսի պես անսասան, Սովետական Հայաստա՜ն,*
*Հավերժական հաղթանակիդ հոգիս դափնի ահա՛ քեզ։*

Երևան, 19. 11. 46

## ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ

*Ուրախության արցունքներ կան, որոնց շիթով լույս կծագի,*
*Եվ հույզերովն լուսաթրթիռ, սրտերն վարդի պես կծաղկին։*
*Երջանկության առվակներն ալ մինչ կհոսին բյուրեղ-ոսկի,*
*Համայնական կրա՛կ դարձած հոգիներուն մեջ կառկայծին։*

*Արցունքներն այս հիմա ծաղկուն, մեր աչքերեն կարտահոսին՝*
*Մեր սրտերուն, հոգիներուն ժպիտներն են անմեկնելի.—*
*Մեր պետության հովանույն տակ, ու հետը մեր ժողովուրդին՝*
*Հայրենի տունն ենք հարազատ,—երազը մեր բո՛րբ, վաղեմի։*

*Կարտահոսին անոնք հույսով՝ մեր աչքերեն, մեր սրտերեն,*
*Հողին վրա մեր դարավոր, հողին վրա հայրենական՝*
*Ու խառնըված մեր ոռոգող քրտինքին հետ, հո՜ւր մշտական։*

*Պիտի ծաղկին արտերը մեր, այգիներն ալ միրգով հարուստ.—*
*Հայոց սեղանն հյուրամեծար, հայոց գինին առատահոս՝*
*Ու կյանքը մեր պիտի դառնա երջանկության շքնաղ փարոս։*

Երևան, 17. I. 47

# ՍՊԻՏԱԿ ԾԱՌԵՐ

*Մնդուս հագած սպիտա՜կ նոր հարսի պես անխռով,*
*Ճյուղերն իրենց տարածա՜ծ միջոցին մեջ հեշտանքով,*
*Նոր փաթիլներ կընդունին մշուշապատ երկինքեն.—*
*Ձյունն սավան է փռված՝ այդ ճերմա՜կ ծով համորեն։*

*Աշնան օրվան տեսա՞ծ եք դաշտերը պե՛րճ բամպակի.—*
*Չունին անոնք այնքան գեղ, որքան ծառերն անանուն,*
*Գոս ճյուղերուն նստած են փաթիլները բերկրալի,—*
*Նշենինե՜ր են կարծես, ծաղիկներով ակաղձուն։*

*Արբեցնող բույր չունին, ո՛չ պտուղներ մեղմանուշ,*
*Իրենց շուքին հովիկներ ու զեփյուռներ չեն խաղար՝*
*Նուրբ շապիկ են լոկ հագած թերթ թերթ ծալքով անհամար։*

*Երևանի ձմեռն է՝ սառնամանի՛ք, ձյո՛ւն, մշո՜ւշ,*
*Ու գարնանե՜նչ հույզերով քնքուշ ծառեր սպիտա՜կ,—*
*Հեքենվազ, խրախճանք՝ հայրենակա՜ն տո՛ն համակ։*

Երևան, 4. I. 47

## ԼՈՒՍԱՊԱՏԿԵՐ

Ի՜նչքան պայծառ լուսատոն,—ի՜նչ արբեցում հայրենի՜
Կապույտ երկինք, ձյուն, արև՝ տարերքն ամբողջ բաղխտա՞կ։
Համադրություն բնության, կամ դաշնամուր—լուռ նվագ՜
— Հոգիս ո՛րքան կբացվի պատկերուն տես այս լուսե։

Արև հիմա կը ժպտի ջերմատարա՜ծ ցոլքերով։
Ո՞ւր էիր դուն, ո՛վ արև,—անհո՜ւն արև ջերմ ու վառ,—
Կը մաղի՞ր դուն բուքեն, թե՞ նահանջած էիր դուն,
Դե՜հ, բարձրացիր հրաշունչ, թող փարատին մառ ու բալ։

Ցոլքերն ահա կխաղան համբույրներով սիրատենչ,
Ձյուներուն հետ նրբածալ, բայց գրկումն անդավառ
Չեն դիմանար ալ հիմա, կը նվաղին, կը փխրին։

Ջինջ երկինքեն արևն դեռ լուսաթրթիռ ժպիտով,
Ըսպիտակին համբրեն շողերն փունջ փունջ կը սփռե.—
Ի՜նչ արբեցո՜ւմ հայրենի, այս ի՜նչ պայծա՜ռ լուսատոն։

Երևան, 12 I 47

# ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Դարերու մութ անդունդներեն անցար դուն,
Կենսածիծաղ ուրախ երգերդ ո՛ղբ դարձան,
Ու շարիքներն բազում՝ գլխուդ թափվեցան՝
Ջարդ, բռնագաղթ, ավեր ու զոհ անանուն։

Բայց հոգիին մնացիր պի՛նդ ու խրո՛խտ,
Կառչած ներքին ազատության հավատքիդ,
Հնադարյան մշակույթիդ ու լեզվիդ,
Եվ ապրելու հզոր կամքիդ անհողդո՛ղդ։

Թշնամիներդ արյունարբու գիշաշար,
Թավալգլոր խորտակվեցան ու կորան՝
Ցարն ու Համիտ, Իթթիհատը նենգ, դաժան—
Դո՛ւն անսասան մի՛շտ մնացիր դարե դար։

Ուժգին թափով դարձյալ ոտքի՜ կանգնեցար,
Դեմ խոյացար ոսոխներուդ նենգադավ,
Կոթողեցիր հայրենիքդ՝—լո՜ւյս թաթավ,—
Արդ կծաղկիս ապագայով արևվառ։

Երևան, 31. 12. 46.

# ՀԱՅՐԵՆԻ ԳԱՐՈՒՆ

Ահա՛ արդեն գարուն է, ծաղկածիծաղ պերճ գարուն,
Վերազարթնումն բնության, թռչուններու ճռվողում,
Հայրենի այս գարնան հետ հոգիս հիմա կը ծաղկի,
Ծաղիկներու պես դալար, երա՜նգ, երա՜նգ կը բացվի՜։

Ու գարնան հետ կը ծաղկին համայնական վառ տենչեր,
Հնգամյակի կատարման՝ միշտ կը լարվի կամքը մեր,
Կը տարածվի գյուղե գյուղ աշխատանքի թափին ուժեղ,
Կը բարձրանան հարաճուն նոր կոթողներ լուսազեղ։

Կոլխոզական դաշտին մեջ կյանքը կեռա օրե օր,
Տրակտորը կակոսե արգասավոր հողը խոր,
Գարնանացա՜ն է հիմա, կոլխոզնիկներ շլապի՜նդ
Առատորեն կը ցանեն՝ կենսուրախ ու կենսախինդ։

Անոնց շարքին եկվորներ ափովն իրենց՝ լայն ու խոր,
Սերմ կը հանձնեն մայր հողին՝ երջանիկ ու քրտնաթոր.
Կը կառուցեն տունն իրենց հայրենիքի մեջ կայուն,
Ապագայով հուսավառ, նոր ավյունով թաթավուն։

Ես կը դիտեմ վեհաշուք գագաթները սարերուն,
Ու դաշտերուն բարձրացող աշխատանքի հեքը լի,
Արարատեն տարածվող խորհուրդը մեր իղձերուն,
Ու կողջունեմ հայրենի մեր գարունը բերկրալի։

Երևան; 20. 3. 47

# ԽՈՅԱՆՔՆԵՐ

# ՎԵՐԱԾՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Որքա՜ն ծիծաղ, որքա՜ն խինդ, որքա՜ն ժպիտ այս անգամ,*
*Ի՜նչ տաղերով երգեմ քու լուսաճաճանչ ապագան,*
*Միլիոնավոր սրտերու գերահրզո՜ր հանդըրվան,*
*Վե՜ց դարերո՜ւ վա՛ռ երազ, իմ Նորակերտ Հայաստա՜ն։*

*Ի՜նչ սա՛ք սրտով պաշտեմ քեզ, ո՜վ քաջաղեն մարտկուհի,*
*Քու հարաճուն վերելքին ի՛նչպես խառնեմ իմ քրտինք,*
*Այսքա՜ն հեռու ես քեզմե, նույնիսկ տեսած չեմ քեզի,*
*Հինադարյան իմ երկիր, վերածընվա՜ղ հայրենի՜ք։*

*Քու դաշտերուդ, ձորերուդ, կարկաչահոս գետերուդ,*
*Բարձըր ու սեպ սարերուդ և ափերուդ պաղպաջուն,*
*Հնամյական արևուդ և երկինքիդ ջինջ ու լուրթ,*
*Սի՛րտըս ընծա՜ կը բերեմ խոյանքներուդ շառագույն...*

*Ու նոր ոճով բարձրացող, նոր հարսի պես սիրալի,*
*Մշտածաղկող մա՜յր Ոստան, գեղածիծաղ Երևան,*
*Մեր հույսերու վա՜ռ խարույկ ու երկի՛նքը բերկրալի...*

*Որքա՜ն ծիծաղ, որքա՜ն խինդ, որքա՜ն ժպիտ այս անգամ,*
*Հո՜ւր քընարով տաղերգեմ մարտնչումըդ հերքյուլյան,*
*Մեր հույսերու հանդըրվան, չքնաղագե՜ղ Հայաստան...*

29 Յոյ. 1937

# ՄԵԾ ԳԱԼԻՔԸ

Ներշնչումի խո՛ր ակերեն հեռանըրվագ կը հնչէ,
Հուշեր, հույսեր ու երազներ՝ հույզերու մեջ կը լըավին,
Մինչ կունկնդրեմ, կը հանձնըվիմ —խուլարշա՞վ է, թե ի՞նչ է,
Որ հոգվույս մեջ կը մըռը՛նչէ, ինչպես ցուլ մը՝ կրկեսին։

Հիշատակներ՝ իբրև անցյալ ու մոռցված՝ մերթ կը ժպտին,
Մերթ վշտահար, մերթ դաժան, մերթ ոխակալ ինձ կը նային,
Ու մինչ ներկան մերթ անորոշ ու մերթ պայծառ, մերթ մըթին,
Ապագայի լո՞ւյս իտեալով զըրահըված՝ ես կը տանիմ։

Պիտի տանի՛մ, կյանքը պայքա՞ր ու խոր իտեա՞լ է արդեն,
Ես կը սպասեմ մեծ խորհուրդին հայտնությունը օրն օր,
Ու կը լըսեմ հեռանըրվագն որպես քայլերգ հըրեղեն,
Որ կարշավե, դեպ՝ ինձ կուգա իբրև ալի՛ք գերհըզոր...

Ու լեռնացած գետ կարշավե, մըթին ու խոր կիրճերեն,
Ուր մոլեգնած հո՛ծ ամբոխը կը մագլցի դեպի վեր,
Դեպի արև, ու կապտանա ցայն գըավել խուլորեն,
Ու նոր ցո՛լք տալ մեր այս կյանքին, մեր այս կյանքին գերիվեր։

Ու տակավին կը լըսեմ ես աղաղակներն մարտագոռ,
Որպես շեփո՛ր, որպես հրդե՞հ կը տարածվի՛ն, կողոքեն,—
Ես դո՛ւրս կուգամ Ներաշխարհես անպարագիծ, ինքնազոր,
Դիմավորել մեծ խորհուրդին, մեծ գալիքը լուսեղեն...։

1937

# ՀՈ՜ՒՐ ՉԵՄ ՀԱՅՑԵՐ ՄՈՒՍԱՅԵՆ

Հուր չե՛մ հայցեր ես մուսայեն, զի հոգվույս մեջ հար վա՛ռ է,
Ու չեմ մուրար շիթ մը ժպիտ, շիթ մը արցունք, շիթ մը ցող,
Կյանքեն կառնեմ, կյանքին համար բյո՜ւր երանգներն հոսանուտ,
Կը քանդակեմ լո՜ւյս գիծերով, հոգվույս մուրճով կենսավետ։

Ես պետք չունիմ Պրոմեթեի Զևսեն գողցած կըրակին,
Զի մա՛րդ եմ ես, և ի բնե ունիմ կըրակ ու տաղանդ,
Ու խորազեն հայա՜ցք ունիմ, հոգի ու միտք հարադատ,—
Բա՛վ է միայն քուրմը ըլլալ խոր արվեստին բանակերտ։

Ու մարդն ալ է արդ հավասար աստվածներու հանճարին,
Հսկաներու ահե՛ղ ուժին, ու Աստղիկի լույս-գեղին,
Կը մարտընչի, կը տապալե ու կստեղծե վերըստին,
Ու կը ճախրե անհունին մեջ և բևեռեն կը խոսի։

Մա՛րդ էր Հոմեր, մա՛րդ և Փիդյաս, Էսխիլն ու Շեքսպիր,
Մա՛րդ է նաև ցամաք ու ծով ճեղքող բանվոր-կառուցող,
Որ կա՜մք ունի ստեղծագործ ու նըվաճող պի՛նդ հոգի,—
Ու դեռ մարդ էր ծընողը զԱյն՝ աստվածորդի կը կոչվի...

Մա՛րդ եմ և ե՛ս, հուր չե՛մ հայցեր, ո՛չ ներշնչում մուսայեն,
Կյանքեն կառնեմ, կյանքին համար հո՛րդ երանգներ հոսանուտ,
Կը քանդակեմ ու կը հըղկեմ հոգվույս մուրճովն նըրբակերտ,
Կը նըվիրեմ մարդուն փառքին, ստեղծագո՜րծ գեր-կամքին։

1938

# ՎԵՐՀԻՇՈՒՄ

Կանգնիմ հիմա ես մըտով՝ ոտաբոբիկ, գլխաբաց,
Մեծ կամուրջին քարաշեն—ո՞ր դարուն է կառուցված—
Որուն տակեն կը հոսի Սիհուն գետը ֆշշալով.
Վերեն քաղաք կըմտնեն կարավաններն լի բեռով։

Կամուրջեն դուրս դեպ՝ հարավ, ֆելլահներու հյուղավան,
Ուր թե լաճեր, թե մեծեր շաքարեղեգ կը խաղան
Ու քիչ հեռուն՝ դեպ հյուսիս՝ կյավուր գյոյուն է արդեն,
Անոնց առջև փռված են զմրուխտ դաշտեր համրեն։

Անհիշատակ դարերեն Սիհուն դեռ միշտ կը հոսի,
Իր երկայնքին պարտեզներ՝ հուռթի, փարթամ ու բերրի.
Անդաստաններն կը ծաղկին իր օրհնաբաշխ հեղուկեն,
Եվ Ատանան կը բերկրի բերքի, միրգի առատեն։

Ոսկի ցորյան արտեր կան, լայնատարած՝ ինչպես ծո՜վ,
Կան և արտեր ըսպիտա՜կ, ծածկըված պերճ բամպակով,
Ուր կաշխատին քովե քով Թուրք ու ֆելլահ, հայ և հույն.
Առատորեն թափելով քրտինքն իրենց օրն ի բուն։

Ու քաղաքը լայնանիստ, փռված Սիհուն գետափին,
Իր բյուրավոր գյուղերով, ծո՜վ դաշտերով ժպտադին,
Այգիներով պաղալի, բընակչությամբ բազմացեղ,
Ուր մանկությունն իմ անցավ ա՜յնքան ծանր խելահեղ։

Ես կանգնիմ մեր տան քովին՝ երազելով, երգելով,
Ուր ա՛լ չըկան հին շեն շող տուներ ծանոթ քովե քով,
Ո՛չ ալ ծանոթ հին դեմքեր, ո՛չ խաղընկեր վաղեմի,
Հո՛ն ավերա՜կ է հիմա, հարազատին անձկալի։

Հո՛ն կան այնքան հիշատակ, ա՛յնքան արցունք ու երազ,
Եվ կան երգե՜ր այնքան խոր, ազատության լայն ո՜ւ պարզ.
Ի՜նչպես ձեզի չը հիշեմ դարագլուխ կը կաղնեք,
Եվ կամ ի՜նչպես չողքամ ձեզ, արդ պատած է տրտում մեգ...

1938

# ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

*Դեռ մինչև ե՞րբ տև պիտի տառապանքն մեր դարակի՞րտ,*
*Ու տակավին հայրենաբաղձ, թափառական՝ հոս հոն բե՞ռ՝*
*Եվ մինչև ե՞րբ նախատելի ու վիրավոր թերթ առ թերթ*
*Կարոտախառ կրծե պիտի արյունաքամ սի՞րտը մեր...*

*Ես չեմ գիտեր ժողովուրդ մը ա՛յնքան վշտեր մատուցած,*
*Ազատության վեհ սեղանին և գալիքին մեծազոր.*
*Ոչ մեկ սերունդ մեզի նման չէ տառապած, չէ՛ հյուծած,*
*Ու տակավին աստանդական կը տվայտինք օրե օր...*

*Քայլափոխիս կը հանդիպիմ դառնամռայլ դեմքերուն,*
*Որոնց ճակտին մեծ պայքարը, դրոշմած է խո՜ր ակոսներ,*
*Որոնք սակայն, դեռ կը տոկան ու կսպասեն աննկո՜ւն...*

*— Դեպի երկի՜ր, կարգախոսը թո՛ղ ղողանջե ամենուր,*
*Եվ ա՛լ վերջ տալ տառապանքի՜ն — հետապնդեց մեզ դարեր —*
*Վերադառնա՜լ հայրենիքի գոգն հարազատ, կենսաբույր...*

1939

# ԲԱԽՏԱԿԻՑ ՍԵՐՈՒՆԴԻՆ

*Մեջն ափերուս, գի՛ր ափերդ, և ակնարկդ ալ՝ ակնարկիս,*
*Դիտենք զիրար ու սեղմենք, լո՛ւռ ու երկար կաթոգին...*
*Ճակատագրի միևնույն համադրությունն ենք ուժգին,*
*Եվ անցած նույն հորձանքեն՝ հիմա խոլյակ ցանուցիր...*

*Եվ ես ըզքեզ, ու դուն զիս՝ կարդանք անձայն, ունկընդրենք,*
*Զի մենք շատ լա՛վ կըմբռնենք, կը հասկընանք և՛ զիրար,*
*Չէ՞ որ դառն էր մեր ժըպիտն՝ եղավ պայքարն ալ համառ,*
*Մեզի ի՞նչ փույթ, թե հիներ, վեճ ու աղմո՛ւկ ունին դեռ...*

*Մենք մեր ճամբան գիտենք ա՛լ—չը մոլորինք, չը շեղինք—*
*Անծանոթ այս ափերեն հայրենի տունն է կայան՝*
*Մշտավառ հո՛ւրն մեր հոգվույն, զայն չը լըքե՛նք, կը մըխի՛նք...*

*Մեր արյունին պարտքն է այդ,—մեր սերմի տուրքն է վըսեմ,*
*Ի՞նչ փույթ, որ մենք սերունդն ենք օտար մայթի՝ երերուն,*
*Քանի ունինք կուռ հավա՛տք՝ գիտակցությունն ալ կյանքին...*

1938

# ՀՊՈՒՄԴ

*Հո՛ւր մատներով դըպա՛ր դո՛ւն, քընարիս լո՛ւռ լարերուն,*
*Մեղեդիներ թրթռացին ճաճանչներով թաթաւուն*
*Եվ հուզական պահերուս վերադարձա ես կրկին,*
*Ուր հեզասահ առվակներ կը կարկաչեն, կը ժըպտին...*

*Փոթորիկով չեկար դուն, ո՛չ մըրրիկով խոլական,*
*Այլ՝ զեփյուռով մեղմավար ու սյուքերով—պա՛ր գարնան.*
*Ընծայում մը եղար, քո՛ւյր, հոգվույս լըռին խորանին,*
*Վերադարթնող երգերուս, նըվագներուս՝ մըտերիմ...*

*Բանաստեղծը սիրեցիր, սիրեցիր տա՛ք հուզումով,*
*Ու պաշտեցիր հոգիին՝ երազանքով աղվական,*
*Ներշընչումի բո՛ց տվիր, տվիր թըռի՛չք ու կորով...*

*Ներաշխարհիս կուտակված՝ ներկա բազում խոհերն սև,*
*Երգերս էին խափանված, իրենց լուծին տակ դաժան,—*
*Հըպումդ հոգիս առկայծեց, տաղերս նորե՛ն առին թև...*

1944

# ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Կարդալե վերջ քեզ կրկին, ո՛վ բանաստեղծ, ո՛վ հսկա՝
Երգիչ մ'իբրև խորհուրդի, ես խըղճացի իմ վրա,
Որպես թըռչնիկ մը դողդոջ, հուսակտուր ու վտիտ,—
Հիա՛ցքն հոգիս ողողե՛ց՝ շանթե՛ց զիս լո՛ւյսն հանճարիդ։

Շանթված հոգիս լուռ է, լո՛ւռ, հիմա ի՛նչպես երգեմ ես,
Կը դողդըղա ձեռքս ահա՛, կը փշըրվի քընարս հեզ,
Սիրտըս սակայն, իբրև ծո՛վ, լայնածավալ կը բացվի՛,
Ծախրամբրիկ հանճարիդ շառայլներուն ծարավի՛...

Մըշտահընոց հոգիդ հըզոր ջահեր ես վառեր,
Ու «Հեթանոս Երգեր»-ուդ անմահ տաղե՛ր նըվագեր,—
Ի՛նչքան փարթամ, ի՛նչքան լույս, ի՛նչ կառուցում վարպետի,—
Լուսանձրևներ կը տեղան արփաճաճանչ գագաթի։

Դո՛ւն, Եղիային դիմեցիր՝ այդ «Հընդիկին» մորկաշունչ,
Բացիր սիրտըդ վիրավոր՝ Նիրվանային,—մե՛ծ անուրջ,
Բայց խըռովյալ մընացիր, մոլեռանդ քո՛ւրմ արվեստիդ,
Տապար մ'եղավ քեզ բաժին՝ մարդկութենե՛ն չարախինդ...

1913

# Մութ ժամեր

Հանգչեցան թըռչըննե՜ր, երազնե՜ր բազմերանգ,
Ժըպիտնե՜ր՝ աղվական, հուզումնե՜ր՝ վանկ առ վանկ։
Ու հիմա պատա՜ծ է սև մըշուշ թանձրամուխ,
Ու հոգիս կը մըխա զերդ մարա՜ծ հըրաբուխ։

Շուրջըս կո՜ծ ու արցո՛ւնք՝ մոլուցքներ չարանենգ,
Անորոշ մո՜ւթ ժամեր, խափանված տենչ ու երգ...
Կը հոսեն քայլերուդ, կը դավեն և՛ կյանքիդ,—
Ահավո՛ր ի՜նչ քըքիչ, դավադիր ի՜նչքան խինդ։

Ամեն օր դող, երկյո՜ւղ, հնհընո՜ւք սրտիդ մեջ,
— Պատմության ի՜նչ տըխուր, ահրային ի՜նչ սև էջ.—
Կը շըջիս անհոգի, շուքեդ իսկ հալածված...

Ու կանաչ, բո՜ց կյանքեր բանտերո՜ւն մեջ լեցված...
Մահվա՜ն հետ դեմ առ դեմ կապանե՜ն լուսադեմ
Ազատությո՜ւնն ժամե ժա՜մ... հավատքո՜վ վըսեմ։

Մինչ հոգիս կը մըխա զերդ մարա՜ծ հըրաբուխ...

1914

# ԱՄԵՀԻ ԳՈՌ ԱԼԻՔՆԵՐ

Թշվառներ կը հորդին ամբոխներո՜վ ամեհի,
Ուր մոլեգնած կը կըռվին, խոր հավատքով բո՜ց արի։
Կը տողանցեն աներկյուղ՝ լոզունգներով բարձրադիր,
— «Ազատությո՜ւն», կը գոռան, ձայներն հըզո՜ր՝ վերդ հրթիռ.

Ձերդ ամեհի ալիքներ կը փըրփըրի՜ն, կը շաչե՜ն,
Ազատության երգերով աշխարհները կը ցնցեն,
Բռնակալներն չարանենգ, կը դողդըղան, կը սըմքին,
— «Կըրա՛կ, կըրա՛կ»—կը գոչեն՝ մահապարտու հույժ վերջին...

Կիյնան զոհեր, աջ ու ձախ, փողոցները կարյունին,
Ամբոխները սակայն դեռ բըռունցքներով կը կըռվին.—
Հեղեղի պես կը հոսին հըզոր թափո՜վ անդադար։

Մոլորակներն իսկ հիմա կը խորտակվին, կիյնան վար՝
Երկինքներեն փըրցըված՝ որպես բեկոր դարավոր,
Ամբոխներու կամքի՜ն տակ կըլլան փոշի, կամ անզոր։

1844

# Ո՞ՒՐ ԵՍ ԴՈՒՆ

Կիսամութին մեջ հոգիս թևեր առած կը սլանա,
Կը բարձրանա դեպի քե՜զ, դեպի քե՜զ։ Օ՜, ո՞ւր ես դուն...
Նորե՜ն, նորե՜ն խուցս կուտաս։ Ի՜նչքան անձրև, ցո՛ւրտ նորեն։
Օ՜, չարության հողմահույզ։
Շանթ մը կախված ամպերեն՝
Սաղարթախիտ սարերեն՝ ըսպառնագին կը գոռա։
Կը բառաչե խելագար՝ անասուն մը մորթըված։
Ու նավ մ՚ահա՛, ծովուն մեջ, փոթորիկեն ջախջախված։
Մինչ սավառնակն կը սուրա՜, կայծակներու ընդմեջեն...

Ու անդադար իմ հոգիս կը սըլանա, կը սուրա՜,
Իտեալին պես շառագույն ու հավատքի՜ն պես վըսեմ,
Կը մագլցի՜ դեպի քեզ։
Ահա՛ արդեն կը լըսեմ,
Տըրոփումներ ու կանչեր՝ ամբոխներեն խանդավառ՝
Որ քե՜զ կուգան հաղթակա՜մ ու հավատքով գերհըզոր։

Ո՜վ արթնության լուսակեզ, արդարությա՜ն փիսավոր։

1944

# Պատգամներ

Պատգամներ կան հովույս մեջ, պատգամներ գոռ, խորիմաստ,—
Ամբոխներուն գերհզոր, ամբոխներուն խանդավառ,—
Թումբերու պես կը պայթին, հրդեհի պես ահասաստ,
— Ամբոխներու սրտին մեջ, լույսի ջահեր մշտավա՜ռ։

Ու պատգամներս բոցանուռ՝ հերոսներու սրտին նետ,
Տառապակոծ մարդկության բյուր կոտտանքեն գոյացած,
Ժպտաբողբոջ նոր կյանքին անդորր ու սե՜ր արփավետ,
— Արդարությա՜ն հընոցեն դարբնվելով դուրս եկած։

Ձեզի համար, թշվառնե՛ր, խաղաղության դո՛ւք զինով,
Գիտակցության հուրը թող ձեր սրտերեն մրրկազոր,
Մաքի՛ շանթեր արձակե, խավարին դեմ թանձրախոր...

Եղբայրության ցանկացող հոգիներուն ձեր կորով,
Ու ձեր կամքին վճռական՝ մշտավառ հո՜ւր ու արփի,
Ձեր պայքարին հաղթական՝ հավերժական լո՜ւյս դափնի...

# ՄԵՆՈՒԹՅԱՆ ԽՈՒՑԵՍ

Մենության մեջ, խուցիս փակված, խոր լռության շուրջս հիմա,
Լոկ Պիժուն է ընկեր ինծի—շուն մը մինիոն, գեղնորակ,
Որ կը նընջե քովըս մեղմիկ՝ խաղաղության մեջ ահա։—
Կը խանգարե ժամացույցն լոկ անդորրությունն անապակ։

Լուսամուտիս զույգ փեղկերն ես, լուռ, տենչանքով կը բանամ՝
Լույսին, օդին, ծփրան բույրին ու ձայներուն մարդկային,
Զորս կը լըսեմ հիմա հեռուն՝ ձայներ վշտի դառնահամ,
Իբրև քաղաք ժխոր բանության, հոգիներեն կը ժայթքին։

Ես ինծի հետ, խուցիս մենակ՝ աքսորական վես արծիվ,
Պարտադրված Դեկտեմբերյան դեպքերեն վերջ դժընդակ,
Որ խափանեց, Մեծ Բրիտանիա՜ն, իր տանկերով բազմաթիվ
Ազատությունն Ժողովուրդին՝ ազատությա՜ն անվան տակ։

Աթենական պատմության մեջ պիտի մնա էջ մը խոր,
Ժողովուրդին արտաբերած հերոսությունն անանուն,
Որ կռվեցավ երկաթին դեմ՝ հոգվովը լոկ անհեգու,
Ազատության, իրավունքի համար խիզախ, տունե տուն։

1946

# ԵՐԱԶՆԵՐՈՒՍ ԴԻՑՈՒՀԻՆ

*Հուրը գողնալու տաճար կը մտնեմ,*
*Դողով, երկյուղով, հավատքով առլի,*
*Զի հուրով այդ վեհ, հոգիս պիտ' հըշկեմ,*
*Արվեստին համար, նըման դարբինի։*

*Կը բանամ հոգվույս աչերին խորարձակ,*
*Որբին արվեստի բյո՜ւր երանգներուն,*
*Ու ծըծելով իր հեշտանքը համակ,*
*Կուզեմ սուզիլ ես, լույսի՜ մը հանգույն։*

*Հոգիիս պարապն իրմով կը ցանկամ*
*Լեցնել ես, ըմպել նեկտարն հըրակեզ*
*Ու քուրմի նըման պաշտել զայն, և կամ*
*Սիրե՜լ, բուռն սիրել՝ զինովի մը պես։*

*Քու բագինին եմ ահա՛ ծնրադիր,*
*Ո՜վ երազներուս դիցուհի՝ ԱՐՎԵ՜ՍՏ,*
*Անհայտ դարերու խորհուրդը անծիր,*
*Մարդիկ քեզմով են անմա՜հ, ու հավե՜տ...*

1934

# ԳՈՀՈՒԹՅՈՒՆ

Անդորրն այգուն ինձ կուտա խուժումը հո՛րդ մտքերուն.—
Լուսանկարնե՞ր կը անցան, պայծառ՝ երանգ առ երանգ,
Կը թևածեմ, կը սուրամ գագաթներին զըվարթուն,
Անուրջներու մակույկով կը նավարկեմ համարձակ։

Ի՜նչ հակասանք, ի՜նչ զարմանք—մերթ փոթորիկ, մերթ խավար,
Մտքերու մո՛ւթ արշավանք, սև դիվաձև տեսիլներ,
Զիս կը խոցեն, կը քամեն, կը գլորեն դեպի վար.—
Հուսալքո՞ւմ, խորտակո՜ւմ, քաոսին մեջ խոր գիշեր։

Հոգվույս մեջ այս հակընդդեմ խորհուրդները կը նվաղեն,
Բյուրանկար կը կազմեն էութենես կենդանի,
Մերթ ինձի հետ կը ժպտին, մերթ կը դավեն՝ ինձի դեմ։

Ինչ որ քաղեմ գոյության այս օրենքեն անհեղլի,
Զանոնք մեկ մեկ կը պեղեմ ու կը հղկեմ հոգեին,
Ու կը բաշխեմ բոլորին՝ բարեկամին, օտարին....

1941

# ԹՌՉՆԻԿԸ ԵՐԱԶԻՍ

*Նորածին անդրանիկ որդուս*

Անցա՜ն երբեմնի երազներս աղվո՛ր,
Աղվո՜ր երազներն կյանքիս դեռատի...
Սե՜գ ու հասուն՝ իմ երազնե՜րս բոլոր,
Ձեր բույրովն էի գինով, հուսալի...։

Ի՜նչ անո՜ւշ իղձեր թևաբաց՝ հոգվույս
Մեջ կը ծփային, հորդուն, հուսանուտ,—
Հիմա լո՜ւռ են լո՜ւռ, թախծոտ, մրրկահույզ...։

Դու ես հիմա՝ ի՜ղձ, երա՜զ, հո՜ս եկուր,
Ընդոստ և անհոգ, իմ աղվո՜ր թռչնիկ,
Նեկտարը սիրույս, ծաղիկ մեղրաբույր...։

Դո՛ւն, մեծնաս պիտի երազներուս պես,
Իբրև մարմնացում, իղձերուս բոլոր,
Որ բույրովդ քու արբենա՜մ գեթ ես։

Պիտի ժպտիս դուն, խանդոտ և զվարթ,
Եվ որպես կաղնի՝ ես քեզ հովանի,—
Փարգեր կյանքիս, հո՛ւյսը լուսացայտ...

Եկո՜ւր, հո՜ս եկուր, թռչնիկն երազիս,
Ընդոստ և անհոգ իմ աղվո՜ր թռչնիկ,
Որ բույրովդ քու արբենա՜մ գեթ ես...։

1936

# Ա Ր Ե՜ Վ...

Ներշնչված՝ հազիվ հնգամյա տղուս՝ Լութֆի-
կին՝ արևին հանդեպ արտաբերված սրտաբուխ
բացագանչություններեն

«Ախ, ի՜նչ աղվոր է արևը», գոչեց մանուկն ուժգնորեն,
Առավոտուն՝ երբ բացվեցավ պատուհանը սենյակին,
Ճառագայթներն ողողեցին՝ զվարթացան շուրջն ամեն,
Ան դեռ ՝պառկած՝ անկողնին մեջ՝ պաշտեց արևն հոգևին...

Նախամարդեն մինչև հիմա, արևը միշտ պաշտեր են,
Ու տակավին որքան տարբեր մարդիկ պիտի պաշտեն զայն,
Աշխարհն ալ միշտ իր շուրջ պիտի դառնա իրեն ապավեն,
«Արև՜, արև՜», պիտ՝ աղերսեն իրե՞ն, թույնե՞ր դեռ այնքա՞ն...

Արև լեցո՛ւր իմ հոգիս ալ լույսո՜վ, հույսո՜վ անըսպա՜ռ,
Կամքըս հզոր ու աներկյուղ՝ հըրայրքովըդ պողպատե,
Որ կարենամ կյանքի կռվել թաքուն խղճերս ընդերկար...

Մանուկն անգամ քեզ պաշտեց իր ա՛յնքան անմեղ հոգիով դեռ,
Ոգևորված գոչեց հանկարծ՝ «արև՜ն, ա՜հ, ի՜նչ աղվոր է»...
—Դո՛ւն ամենո՜ւն կենսաբաշխ ու ամենո՜ւն հո՜ւյս, լո՜ւյս ու սեր...։

1940

# ՑԱՅՏԱՂԲՅՈՒՐԻՆ ԱՌՋԵՎ

Արվեստային ցայտաղբյուրք, միշտ կը ժայթքին դեպի վեր,
Ընդախառնըված բազմերանգ նուրբ լույսերով պայծըղուն,
Ու կը ցայտին, կը գծվին՝ վըրան հոգվույն պաստառին՝
Բանաստեղծին խորիմաստ, ուր հըմայվա՜ծ կը դիտեր...

Ու կը դիտե՛ր, կը սուզվե՛ր խորհուրդներու լըճակին,
Ուր մակույկներ հակընդդեմ կըրթևեկեն միշտ անվերջ,
Ուր ալկիոններ ձյունաթույր երամակներ կը կազմեն,
— Երևույթներ բազմիմաստ, կը քանդակվին հոգվույն մեջ...

Մարդն է հսկա կանգնած հոն՝ բարձունքներու կատարին,
Կը՛ մաքառի հաղթորեն՝ իմաստության զենքերով,
Կուզե տիրել, գըրավել անջրպետին այս խըռով...

Բընության հետ կը մըցի ու կը կերտե, կը ստեղծե,
Դյությանք կուտա, կյա՜նք կուտա՝ հավերժական հանճարով,
Լուսանցնցուղ ցայտին մեջ, սիրտն ու կորով դընելով....

1938

# ԵՂԲՈՐ ՄԸ ՊԵՍ, ՄՈՐ ՄԸ ՊԵՍ

Հոգւոյս խորո՛ւնկ ակերէն ջինջ առուակներ կը հոսին,
Ուրկէ հոտերը բոլոր կը հագենան՝ պապակուն,—
Թռչուններն ու եղջերուն, մըշակն հուռթի դաշտերուն,—
Ու ափերուն բազմաթոյր բուրաստաններ կը ծաղկին։

Հոգիիս բյո՛ւր ակերէն, ի՛նչքան հույզեր կը բղխին,
Ի՛նչ խորհուրդներ կուռճանան կը բողբոջին, կը հորդին
Ու ես ամբողջ կը վառիմ, կը հրդեհվիմ հոգեին,
Երգերս երանգ առ երանգ միջոցին մեջ կը ծաղկին։

Ու հոգւոյս խո՛ր ակերէն քաղցրակայլակ ինձ կերգեն.
Բոլոր իղձերս արփաթև ու բաղձանքներս համօրեն,
Եվ ինձ կուտան հերը տաք իմաստության լուսագես։

Ու տաղերս իմ կը բաշխեմ, եղբոր մը պես, մո՛ր մը պես.
Ճամբորդներուն հոգնաբեկ, հոգիներուն բաբախուն,—
Որպես ժըպիտ, որպես սե՛ր, այս ցավատանջ օրերուն...

939

# Կը Տաղերգեմ Լոկ...

Ցեղուհինե՛ր զիս կը տանջեն, կը կանչե՛ն,
Սրտիս խորեն կը խոցեն զիս, կարյունեն
Հո՛ւր ակնարկով սիրո նետեր կարձակեն,
Ու կը պահեն հմայքնուն տակ համորեն...

Հոգվույս խորը աղվալույսեր կը մաղեն,
Դարձյալ, դարձյալ նո՛ր խաբույկներ կը վառեն.
Ով ինձ կերգեն վաղեմի բո՛րբ լարերեն,
Գաղտագողի, ա՛յնքան ընքուշ, քա՛ղցրորեն...

Զարկը սրտիս ներաշխարհեն կը լսեմ՝
Կոհակ-կոհակ հույզերն դարձյալ կը շաչեն,
Ուր ծաղիկներ բո՛ւյր ու երա՛նգ կը ցոլեն...

Չեմ հանձնըվիր քըմայքներուն բայց հիմա,
Այլ արբեցած, հեշտագեղուն հոգեհմայ,
Կը տաղերգեմ գեղեցկությունն այդ վըսեմ...

1840

# ՀԵԼԼԱԴԱ

Աստվածանիստ Օլիմպոսից լույս սփռեցիր մարդոց դու,
Շղթայվեցավ մարդուն սիրույն՝ Պրոմեթեն հըրատու,
Դաժան Զևսը՝ կատաղության շանթեր տեղաց ամեն դին,
Որ մարդն չհասնի աստվածներու բազմաշընորհ տաղանդին...

Քու վես կուրծքեդ ցրեցուցիր դյուցազներն ու հանճարներ,
Աքիլլեսի հըզոր սուրին ներշնչեց իր քնարն Հոմեր,
Տրովադայի հաղթանակով փառքըդ երգեց դարե դար,
Ու Փիդիասի մուրճը երկնեց՝ մարմարակե՛րտ ոսկեդար։

Նախանձոտներ շա՜տ ունեցար, և՛ նենգամիտ, և՛ դաժան,
Ավերեցին ու քանդեցին նուրբ արվեստըդ ըղձացման,
Բայց դուն դարձար մի՛շտ հիացմունք՝ խոր արվեստով գերիվեր.
Խոնարհեցան պի՜ղծ հոգիներ լույս—բագինիդ խնկաբեր։

Մեսոլոնկիի ու Նավարինի դյուցազնագործ սու՜րբ մարտին,
Ջախջախվեցան բանակներն բիրտ թշնամույն, ու վերստին
Դուն տիրացար հաղթանակի՝ ազատությա՜ն դրոշին...
— Ազատության տարեդարձիդ խի՛նդ ու ողջո՜ւյն սրտագին։

25 մարտ. 1937

# ԱՇԽԱՏԱՆՔԸ

*Սալին վրա հիմա երկաթն ատրաշեկ,*
*Կարծակին կա՛յծ, հարվածներուն վարպետին,*
*Եվ զանգվածն այդ կստանա ձև ու արժեք,*
*Աշխատանքովն մարդուն ջղո՛ւտ բազուկին։*

*Անապատներն կըլլան հուռթի ծաղկաստան,*
*Ու քարերն ալ՝ ի՜նչ պալատներ փառահեղ,*
*Վերակերտումն տիեզերքին մշտական՝*
*Աշխատանքի սուրբ հուրո՛վը նորագեղ։*

*Քաղաքները՝ բազմարվեստ ու բազմամբոխ,*
*Ուր մեր կյանքն ալ իր հերո՛վը հա՛ղթ—զըվարթ,*
*Աննյութական կոթողներով անինքնող՝*
*Աշխատանքի շունչովն է միշտ խորիմաստ։*

*Կյանքի ուղին՝ իղեալով է լուսարձակ,*
*Եվ հըղացքն ալ ընկեր՝ բեղուն ճիգին հետ,*
*Հետք մը եթե կրնանք ձգել հիշատակ,*
*— Աշխատանքի պարգևն է այդ արփավետ։*

1940

## ՀԵՎՔԸ

Կյանքը հեք է, տարիներն ամե՛ն կը հեւան,
Ու կը հեւա մետաղաշունչ մեքենան,
Մեր առօրյա հույսն ալ հեքով անթառամ,
Կյանքին կուտա թա՛փ ու թռիչք ամե՛ն ժա՛մ...

Առանց հեքի տըխուր արդյունք պիտ՝ ըլլար...
Հեքն է կյանքին խոր կշռույթը մշտավառ,
Մեծ երկունքն ալ հեքով կըլլա բեղմնավոր,
Հեքո՛վ նորե՜ն կյանքն է ըղձա՜լի ու աղվո՜ր...

Քանդակագործն կուտա շունչ, հո՜ւյզ մարմարին,
Հոգվույն մուրճովն, լույս հեքո՜վը տաղանդին,
Ինչպես քերթողն իր տողերո՜ւն, բառերո՜ւն.—

Հե՜քն է հոգին՝ վերելքներուն հարաճուն,
Եվ արվեստին՝ մշտասատար լո՜ւյս թրթռուն.—
Ու մեր կյանքին վառ ծըլի՜ն է ակաղձուն...

1940

# ԵՍ ԻՆԾԻ ՀԵՏ

Ես ինծի հետ եմ ա՛լ հիմա, լո՜ւռ ու անդո՜րր այս պահուն...
Ո՛չ մեկ շշուկ և չարանենգ ո՛չ մեկ քրքիջ ա՛լ հիմա,
Ես ինծի հետ՝ խոկումներով, լուռ հույզերով անանուն,
Խաղաղության մեջ արբեցած, կը թևածեմ աներկրա...

Եվ առօրյա խարխլատիր կյանքի թոհին ձերբազատ,
Հոգեհրճվում՝ կը կատարեմ ես ինձմե դուրս տարածված,
Եվ անորոշ խոհերն ամեն արդ կը ժպտին խանդակաթ՝
Մտերմորեն, իմաստությամբ անդորրին մեջ լուսամած...

Այս ի՜նչ բերկրանք հոգվույս համար՝ որ դառնացած, ու հոգնած,
Տրորված էր հարվածներեն, կեղծիքներեն, ժխորեն,
Հիմա անհո՜ւն անդորրին մեջ կը նըվագե մեղմորեն...

Ո՛րքան բարի ու հոգեթով գիշեր է այս հեզանազ,
Իր հովանիույն տակ կը հըսկեմ լուռ հույզերուս ես այնքան,
Որոնք հատ հա՜տ արդ կը ծաղկին երգերուս հետ աղվական...

1940

# ԿՈՒԶԵՄ ՎԵՐԱՊՐԻԼ

*Ամեն Ապրիլին լայն դաշտերը զո՜վ,*
*Կանաչ կը հագնին, ծառեր կը ծաղկին,*
*Ծաղիկներն իրենց թույրովն ու բույրով,*
*Հեշտանքով հովգույս մեջը կը լեցվին...*

*Ի՜նչ բերկրա՜նք, ամեն Ապրիլին բոլոր*
*Տունկերն՝ լերկ ու գոս՝ կը վերընձյուղին,*
*Տրտում նըշենիս ալ հիմա ազվո՜ր*
*Կը ծաղկի՝ հարսի մը պես ժըպտագին։*

*Վըտիտ ծաղիկներն թաղարիս, ամեն*
*Ապրիլին ինչպե՜ս կը բացվին, ու, նոր,*
*Հաղեթով թույրով կը բուրեն նորեն*
*Ու մարմանդներն ալ կերգեն սյուքորոր...*

*Եվ ինչո՞ւ մենք ալ ամեն Ապրիլին*
*Նոր ավյունով մը չենք վերընձյուղիր,—*
*Օ՜ ես ալ, ե՛ս ալ ամեն Ապրիլին*
*Կուզեմ վերապրիլ, թարմ ու փափիր...*

# ՈՐՄՆԱԴԻՐԸ

Անտաշ քարը ուսամբարձ՝
Վեր կը կըրե հե ի հե,
Ու մուրճովը հըղկելով,
Կը զետեղե իր տեղը։

Ան կը տըքնի անդադար,
Ամբան տաթին քրտնաթոր,
Մուրճը կըկին կը զարնե,
Ցեխի շերտ մը նետելով։

Տրամալարով կը դիտե,
Հյուսած որմը ամպամերձ,
Ու քարերը կը դըլան
Վարպետի բիրտ մուրճին տակ։

Քարեր հատ հատ կը շարվին,
Ու պատն անա՛ կելլե վեր,
Կըլլա շե՜նք մը փառահեղ։

Ու վարպետը հողնաբեկ,
Կտոր մը հաց թևին տակ,
Խրճիթ կերթա գըլխահակ....

1944

## ԽՌՈՎՔ...

Ներաշխարհիս մութ ալքերէն կը մըռնչեն հո՛րդ տենչեր,
Եվ հորձանուտ մըրրիկներն ալ կայծակոծին, կը շաչեն,—
Խո՜լ ջրվէժներ համատարած անդաստաններն կողողեն,—
Ու տարերքն ալ կը հրդեհվին ու կը մըխան տե՛նդերեն...

Օդանավեր կը սավառնին՝ ոլորտներէն միգամած,
Փոթորկահույզ ծովուն վրա նավ մը հիմա կը սուրա,
Ու կը խոսի ձայնասփյուռը՝ բևեռներէն մինչ բևեռ,
— Լուսասյուներ երանգ երանգ խավարին մեջ կը խրվին...

Խորտակված է ա՛լ միջոցը, անջրպետը գըրավված,
Մարդը հիմա տերն է ամբո՜ղջ տիեզերքին, անհունի՜ն,
Իր կամքին տակ կը դողդողան տարերքները դարավոր,
Ինքն է արքա՜ն, կը պատգամե՝ նոր **Եղիցի** այլակերպ...

Եվ ան, մտքի ու հոգիի ի՜նչ հսկաներ կերտած է,
Ու թափանցած նուրբ արվեստի ամենախո՜ր ծալքերուն,
Բայց տակավին խըռո՜վ ունի, տենչե՜ր ունի անըսպառ,
Որոնք անվերջ արտահոսին ներաշխարհե՜ն պիտի դե՜ռ...

# ՓԱԽՈՒՍՏ ՔԱՂԱՔՆԵՐԵՆ

Քաղաքներեն գարշահոտ, քաղաքներեն ախտաժետ,
Պոռնըկացած մայթերեն, ապականած բարքերեն,
Հաճույքներեն ննջավոր, լըպիրշ կիրքեն ու քենեն
Իսպառ փախչիլ, հեռանալ, խույս տալ կուզեմ ես հավե՜տ...

Հոգիս կորսված ժխորեն, որ տըրորված էր արդեն,
Ձայն փնտռեմ պիտի ես, ապաքինեմ պիտի ձայն,
Անապական դաշտերն ինձ պիտի ըլլան ապաստան,
Մանուկ հոգիս անաղարտ պիտի գտնեմ ես նորեն...

Հոն պիտի զիս բարևեն դաշտորդիներն ամեն օր՝
Գութաններով, քըրտինքով ու հովիվը՝ սըրինգով,
Արևավառ գեղշկուհին՝ իր ամոթխած ժըպիտով...

Ես կը փախչիմ, կը փախչիմ քաղաքներե՜ն լուսավոր,
Քաղաքներե՜ն խարդավանք, ժըպիտներեն՝ նենգ ու դավ,
Ու սերերեն եղծանված, ուր չեմ դառնար ես բընա՛վ...

1940

## ՊԱՀ ՀԱՃԱԽԱՆՔԻ

Աշնան մութ գիշեր՝ խոնաւ ու անձրեւ,
Բայց լո՜ւռ ու անդորր,—ի՜նչ հրճուանք հոգւոյս
Համար—ոսկեհո՜ւռ պահ մը արդարեւ,
Զիս կը պարգեւէ արարչագո՜րծ հույզ...

Արդ երգերս նորեն երանգ կղձենուն,
— Ըմպասումէ վերջ ի՜նչ պէ՛րճ հաճախանք—
Հոգիիս խորեն սըրինգ մ'անանուն,
Դէպ ինձ կը կանչէ լուսերն նորածագ...

Աշնան տրտմանուշ պահումը այսպես,
Կը փթթին մեկ մեկ՝ երանգ առ երանգ,
Կենսահորդ ավշով մերթ խոնարհ, մերթ վես...

Մոր մը պես խորո՜ւնկ խանդաղատանքով,
Կը հրշկեմ զանոնք հոգւոյս մուրճին տակ,
— Երազային սրտիս բաբախանք, գորով...

1940

# Այս Գիշեր

Այս գիշեր դարձյալ փո՛ւնջ փո՛ւնջ ծաղիկնե՜ր կը ձոնեն հոգվույս,
Այս գիշեր ծափենք, նըվագենք պիտի երգերն անանուն,
Տե՜նչ ու սե՜ր հըզոր, տիեզերազգաց վա՛ռ երա՜զ և հո՜ւյս,
Քընարիս վըսեմ, ու համայնական լարերո՜վ անհուն...

Հոգիներն ամեն արդ զիս կողջունեն, հորիզոններեն,
Հարավեն—հյուսիս և՛ արևմուտքեն, և՛ արևելքեն՝
Բազմաթի՜վ ցեղեր՝ դեղին, ըսպիտակ ու սև համորեն,
Որ նույն բախտն ունին, միշտ նույնանըման կուլան ու կերգեն...

Բոլորն ալ այս գիշեր տաղե՜ր, երգե՜ր ինծ կը նըվագեն՝
Սե՜ր, եղբայրական և խաղաղության ի՜նչ վըսեմ լույսե՜ր,
Բոցե՜ր կը վառեն՝ ղեղուն իղձերով, տենչերով անքե՜ն...

Երանի և թո՜ւյլ ձեզ, ձեր հոգիներուն, համայն եղբայրնե՜ր,
Ձեր երգերով եմ խանդավառ դարձյալ, ձեզմով անվեհեր,
— Ողջո՜ւյն ձեզ, ողջո՜ւյն՝ ծափենք ու երգենք ձեզ հետ այս
գիշեր...

1940

# ԹԵՐԱՍՏՎԵՐՆԵՐ

*Թերաստվերներ այս մութին, կարծես հանկարծ կը հառնուն,*
*Եվ կը շարժին, կը ժպտին, պար կը բռնեն դիվային,*
*Ու հանկարծ ալ խույս կուտան — խո՞ւյս կուտան թե կանհետին։*
*Հոն կը մնաս առանձի՛ն, անհաբեկ ու շվարուն։*

*Կըլլին անոնք ձև կառնեն, գույն կը հագնին, կը շարժին,*
*Հոս հոն ամեն կողմեն քե՛զ կը պաշարեն վերըստին,*
*Տարտամորեն այս պահուն կըլլաս անոնց մըտերիմ.—*
*— Ոսկեդըղյակ կը հյուսեն խորհուրդները անուրջին։*

*Գիշերվա այս խո՛ր պահուն խաղաղություն է հիմա,*
*Ո՛չ մեկ շըշուկ, ո՛չ մեկ ձայն, ո՛չ մեկ լույսի շողշողում,*
*Լոկ թերաստվերք խուսափուկ՝ մերթ դիվային, մերթ ժպտուն...*

*Մեր կյանքն ալ զերդ թերաստվեր, կը հայտնվի, կանհետի,*
*Ուր ամեն ինչ մո՛ւթ ու մե՛գ և ամեն ինչ անիմաստ,—*
*Ճիգ ու երա՛զ թափչային՝ լոկ տենչերու ի նըպաստ...։*

1938

# ԱՀԱՎՈՐ ՈՒՐՎԱԿԱՆԸ

Պայծա՛ռ օրեր, ուրա՛խ օրեր, լո՛ւյս օրեր,
Կը մըթագնիք ու խո՛ւյս կուտաք դուք տակավ,
Եվ ահավո՛ր, գեհենական, մահաբեր
Ուրվականը կը սավառնի նենգադավ…

Եվ ամեն կողմ կը տարածե թո՛ւյն, արյո՛ւն,
Ու կը սփռե, կըրակ, նախճիր, մա՛հ, ավե՛ր,
Կը մոխրանան բյուր քաղաքներ հարաճուն,
Կը խորտակվին մեծ երկունքնե՛ր ու փառքեր։

— Մարտանավերն ականահար կընկղմին,
Ռումբ կը թափեն՝ օդանավերն երկինքեն,
Ու մահափյո՛ւռ հրեշ տանկեր կ՚հարձակին,
Թնդանոթներ հար կը գոռան, կը քանդեն.—

Ստեղծագործ մարդկությունը սարսափած,
Կապրի հիմա արյուն—արցունք ողբալեն,
Կանանչ կյանքեր խըրամներու մեջ նեխա՛ծ,
Բորենիներ կը հոշոտե՛ն, կը լափե՛ն…

Մինչ ղեկավարք կը համառին անողոք,
Աշխարհավեր եղեռնը այս տարածել,
Ձայնասփյուռեն միշտ կը ճառեն լըրբոք,
Թե կը բաղձան խաղաղությո՛ւն մեզ բերե՛լ…

. . . . . . . . . . . . . . . . . .

Մարդկային մի՛տք, մարդկային սի՛րտ՝ առեղծված.—
Գերբընական հո՛ւյժ կառուցված աներկրա,
Բայց որքա՛ն սին, որքա՛ն հիմար ու ցնդած,
Ինք կառեղծե, ինք կը քանդե, ինք կողբա՛…։

1939

# ՌՈՒԲԵՆԵ ՉԵՏՈ

Նվեր Երզնկացիներուն

Լուռ էր քընարս, լո՜ւռ, բայց հոգվույս խորէն
Կերգեր անձայն՝ մերթ պայքա՛ր ու մերթ հույս—
Լուռ երգերն արդեն ավելի խոր են,
Ինչպես լուռ ցավերն հաճախ մրրկահույզ...

Ի՜նչ զարհուրա՜նք, ի՜նչ ավեր մոլեգին՝
Վայրա՛գ, ահավո՛ր—Կը դիզվին զոհեր՝
Հաբեշն է նոխազ անհագ մոլուցքին,—
Արյո՜ւն կը հոսին Աֆրիկյան գետեր...

(Կարկուտի հանգույն ռումբեր կը տեղան,
Ու կը քանդըվին գյուղեր, քաղաքներ,
Սավառնակներու ավերը դաժան,
Ու կը հոշոտվին ծերեր, մանուկներ)...

Քանիերորդ դարու ի՜նչ «ազնիվ» գործեր,—
Օ՜, «քաղաքակիրթ» մարդկությո՜ւնն արդյոք
Արդ կարտահայտե իր «վըսեմ» բարքերն
Մուսոլինիի կամքով անողոք։

Եվ քընարս ի՜նչպես լըռեր պիտի դեռ,—
Դարբնված ոճրեն աշխարհ դղրդա՛ թող,
Մարդը մարդուն գել, գազան է դարձեր,
Արյունին ծարավ, ինչքը թալանող...։

1935

# ԱՀԱԶԱՆԳԸ

Պատերա՜զմ... օ՜, ավեր, և հուսկ, մեզ ալ եկա՛վ քայլ առ քայլ...
Հիմա ճակատ է ամեն տեղ՝ արտասուքի և աղբյուր...
Օդանավեր հրեշներու պես ոռնալով կուգան ա՛լ,
Ու կը թափեն երախներեն ռումբերն իրենց մահասփյուռ։

Ահազանգը՝ մահասարսուռ՝ մինչ կը հնչե վըտանգին,
Հո՜ծ զանգվածներ սարսափահար թաքստոցներ կը խուժեն՝
Խավարին մեջ կամ լույսին, ու սրտերն իրենց մորմոքին
Կոհակներով կիզանուտ՝ ու կոպերն թաց՝ մահվա՜ն դողեն։

Լուռ կապույտն՝ պայթյունն ռումբին՝ օրհասի պես գալարուն,
Ա՛լ հանձնըված ճակատագրի ալիքներուն մըթագույն,
Ռումբերն հանկարծ կը պայթին, կը ցնցվի ընդերքն անպատում.—
Կործանմա՜ն, ճիշտ մահի՜ պես, կը սառի լույսն բիբերուն...

Նըկուղներուն մեջ մահաբույր, թույն կը շընչեն ժամերով,
Թնդանոթներն ու ռումբերը մինչ կը գոռան ահավոր,
Կը քանդըվին ու վար կիյնան շենքերն ուժգին շըռինդով.—
Դըժոխային ի՜նչ զարհուրանք՝ մահվան սարսո՜ւռ ամեն օր...

1940

# ԽՈՐ ԳԻՇԵՐՆԵՐ

Խոր գիշերներ՝ լուռ ու մըթին համօրէն,
Ուր քաղաքներն խաղաղութեամբ կը նիրհեն։
Ոչ մէկ շարժում երկաթակերտ երակէն,—
Ֆապրիքներն արդ լուռ ու անդո՜րր կը ննջեն։

Մեքենական երակ մը լոկ, անդադրում
Լո՜ւյս կը սփռէ՜ հոսանք-հոսանք մշտածոր,
Մինչ հոգիներ երազներով թաթաւուն՝
Մեղմ կը նիրհեն՝ կամ մեղքերով բեռնաւոր...

Գիշերվան մէջ խորհուրդները կը հանգչին,
Ծաղիկներն ալ կը հանձնըւին անուրջին,
Մինչ կը հորդի սև կոտտանքը լո՜ւռ սրտին...

Խո՜ր գիշերներ՝ համատարած լուռ-մըթին,
Ուր երկունքներն օղա՜կ-օղա՜կ կը պեղվին
Կը կոթողվին հոգեբուրգերն աղվագին...

1940

# ԱՐՀԵՍՏԱՎՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Հակած իրենց գործին վրա միշտ կաշխատին, կը ճգնին,
Մերթ կը խոսին, մերթ կը վիճին, կը կատակեն, կը ժպտին,
Ու երբեմն ալ կը համեմեն հայհոյանքով կատակնին
Ու մերթ կերգեն, մերթ կը լռեն կամ կը հեգնեն վերըատին։

Երբ կը վիճին՝ կը լրջանա՛ն, ու, բյուր հարցեր կը հուզեն,
Իրենց ճակտի կնճիռներեն խո՜ր իմաստներ կը հոսին,
Ու կը գծվին տիեզրական այնքա՜ն ցավեր տենդորեն,
Մեկ մեկ զանոնք կը վերլուծեն՝ եզրակացման կը հանգին...

Իրենց մեջ կան ալեհերներ, չափահասներ, պարմաններ,
Ու շատ անգամ բազմալեզու և բազմացեղ հո՜ծ խումբեր,
Բայց, ի՜նչ ներդաշն եղբայրորեն կաշխատին ու կարտադրեն...

Համայնական սեր կը ծո՜րի իրենց հոգվույն ակերեն,
Բազուկներն այդ ստեղծագործ, չըլլայի՜նդ՝ միշտ կը կերտեն,—
Խաղաղորեն աշխատանքը մեծ բերկրանքով կողջունեն...։

1939

# ՀԱՎԱՏՔԻ ՎԱՌ ԵՐԱԶ

Ազատության հուրը ծնավ քու ոգիդ բոցավառ,
— Գեղեցիկըն Աթենասը, ինչպես Զևսի ուղեղեն.—
Դիեցուցիր ու մեծցուցիր, ավիր կրով անսպառ,
Դյուցազնորեն զոհողության տիպար մ'եղար խստադեմ։

Քաղաքներու ու գյուղերու ամբոխն ըմպե՜ց զայն հոգվով,
Որ հագենա ազատատենչ տոչոր սիրտը իր ծարավ,
Ու փարեցավ խիզախ զենքի, միշտ կարգապահ քեզ կամով,
Եվ թշնամույն մեծ մղձավանջ, ա՛հ ու սարսափ ան եղավ։

Կազմվեցան ժողովրդական կուռ բանակներ անվեհեր,
Անհավասա՜ր մարտ մղեցին ազատության ի խնդիր,
Սար ու կիրճեր հանդիսացան ապաստաններ, կրկեսներ,
Հարվածեցին հերոսաբար վառ թշնամին դավադիր։

Դո՛ւն կը կոչվիս հելլեն կամ-կուս՝ տառապանքո՜վ դարբնված
Սնող ԷԱՄ—ԷԼԱՍ զույգին՝ ազատությա՜ն վառ հրթիռ,—
Թե՛ փոքրիկ անհեղասատ, թե՛ հավատքի վա՛ռ երազ,—
Ներշնչեցի՜ր ժողովուրդին՝ պայքա՛ր, կռի՛վ, հո՜յս անծիր։

Աթենք, 18. 7. 44

# ՓՈԹՈՐԻԿԸ

Վար թափով փոթորիկը ամեհի,
Արևելքեն դեպ Արևմուտք կարշավե,
Խորտակելով ամեն պատնեշ անարգել,
Դեպի Բեռլի՜ն, դեպի սի՜րտը նացիզմի։

Սովետական Կարմիր Բանակն է, հզո՜ր,
Վրիժառու միլիոնավոր զոհերու,
Որոնք ա՛յնքան չարչարվեցան, մահացան,
Չար կամքովը աշխարհակալ ֆաշիզմի։

Մեծ Միության առյուծասի՛րտ մարտիկնե՛ր,
Կը սլանա՜ք լայն դաշտերեն անվեհեր,
Անանցելի ձյունագագաթ լեռներեն,—
Դուք հասեր եք չարիքի բույնը արդեն։

Ձեր հարվածը՝ ազատարար և ուժգին,
Կը տապալե հրեշն հիմա անպատում,
Միլիոնավոր տառապյալներն անհամբեր,
Արդարության հաղթանակին կսպասեն։

Արեմ, 31. I. 45

# ՏԵՍԻԼ

Մըտածումներուս խոր արահետէն
Կանցնին հոսանքներ, հըսկա թափորներ,
Կարմիր երիզով լուսեղէն պատկեր,
Մտքիս մէջ խառնա՜ն, երա՜զ հըրեղէն...

Հոսանքներ հուժկու՝ մոլեգնած ամբոխ,
Քաղցած, ածխուած, աղտոտ ու բոպիկ:
Կարմիր կոպերով երկիւղոտ մարդիկ,
Քաղքենի դասուն ահաւոր ոսոխ...

Կանցնին ուժգնօրէն, կերթան բյուրաւոր
Հեղեղ մը ինչպէս, ինչպէս փոթորիկ,
Հին կյանքը քանդող շառաչով սաստիկ,
Նոր գալիքներու հավատքով հըզօր:

1937

# ԿՈՒԶԵՄ

Օ՜, առօրյա գորշ ժխորեն խույս տալ կուզեմ ես նորեն՝
Ձերբազատվել նենգերեն,
Առանձնության մեջ ինքնամփոփ՝ երազանքո՜վ հո՛րդ, վըսեմ,
Օ՜, արբենա՜լ ես կուզեմ...

Մըտերմորեն՝ տենչերուս հետ պահիկ մը լալ կուզեմ ես,—
Անդորրին մեջ՝ գետեզրին
Լա՜յն կապույտին՝ առագաստներն հոգվույս բանա՜լ կուզեմ հեզ.—
Սուզվե՜լ, լեցվե՜լ հեշտագին։

Ի՜նչ հոգեթով՝ անդորրն դաշտին, վառ սրինգը՝ հովիվին,
Մայունները՝ հովերուն,
Երգն անտառին, երգն առուին՝ գործեն դարձո՜ղ մըշակին—
Օ՜, արբեցո՜ւմ անանուն...

1956

# ՑԱՅԳԵՐԳ

Երգ մը տրտո՛ւմ և ալեկո՛ծ կը հեծե,
— Այս լուռ, այս մութ գիշերվան մեջ, խոր, անդո՛րր.—
Ու սիրտերը անհունորեն կը հուզե,
Կոհակ, կոհակ կը տարածվի տխրաղոր...

Կը տարածվի, կը սավառնի մրրկաթև,
Իր հորձանքին մեջ խառնելով հոգիս ալ,
Կը սլանա դեպ ոլորտներ և արև,
Հըրայրքով՝ փաթթըվելու մառ ու բալ...։

Վշտոտ սրտի հեծեծա՛նքն է, թե կո՛ծ է,—
Կը խռովե լուռ անդորրը տենդորեն,
Թախծակայլակ հոգիները կը խոցե...

Մերթ կը ժայթքի լավայի պես մոլեգին՝
Տարերքները կը բըռնկին իր բոցեն,
Կը կարկամին, կը հրդեհվին անմեկին...

— Այս լուռ, անդորր գիշերվան մեջ, խոր մըթին...։

1940

# ԱՇՆԱՆ ՄԵՂԵԴԻ

Մինակ ու տրտում, բայց մի՛շտ անտրտունջ,
Մեղմորեն կերգե հոգիս այս գիշեր,
Աշնա՛ն դալուկեն կազմած իրեն փունջ,
Խոր մեղեդիներ, մելամո՜ւշ երգեր։

Այս ի՜նչ անդորր է, և ո՛րքան վըսեմ,
Նայ տերևները կը ժպտին, կուլան,
Ամպի գորշագույն ծըվեններ նորեն,
Կուգան, կը դիզվի՜ն խորհուրդը աշնան։

Կը դողան ծառեր՝ լույսերն ալ կարծես,
Հովը տրտմալար ու խոնավ շունչով,
Կը բուրվառե զիս բաց պատուհանես,
Ու հոգիս կըլլա անպարագի՜ծ ծով...

Մութ հորիզոնի սև շղարշին տակ,
Կը համբուրեմ ես, կանցնի ստվերս խոր
Անտառներեն, սեպ սարերեն արձակ,
Արահետներեն՝ խոնա՜վ ու մոլոր։

Մունջ կը նիրհե՜ն արդ սարերը համայն,
Լոկ հովն ու տերևք կ'սուլեն, կը շաչեն,
Հոգիս դեռ կերգե տրտում ու անձայն,
Լուռ մեղեդիներ՝ օրոր մեղմորեն...

1983

# ԼՈՒՌ ԱՍԿԻԾ

Վշտակյաց մայրերու

Շուրջըս կրկին կը խաւարին երեւոյթներն առօրյա,
Ներաշխարհիս, հորիզոնին կը կուտակվին գորշ ամպեր,
Պահ մը կարծես, կը խափանվին արև, լուսին և աստղեր,
— Ի՞նչ տըխուր են իրերն ամեն, զորս կը գիտեմ քայլ առ քայլ...

Ե՞ս զիրենք. թե անոնք զիս կը տեսնեն—ինչքա՞ն մոլորում—
Ու ժպիտներն ալ կը խամրին դեռ այնքա՞ն թարմ շրթներեն,
Եվ արցունքի դառն կայլակներ հոգիես ներս կը խուժեն—
Պե՞րճ գարնան մեջ, հոգի՞ս, այս ի՞նչ տերևաթափ, ի՞նչ թախիծ...

Ձեռք մը անգութ, տունկերն ամեն անբարունակ կը հընձե,
Ու մայր հողը՝ կողերուն վրա, արմատախիլ տունկերուն
Բացած խորու՞նկ բյուր վերքերեն՝ լուռ հառաչնե՞ր կարձակե...

Ու հոգվույս մեջ, դու՛ք, մութ գիծեր, ի՛նչ խոր կերպով կակոսվիք.
Կնճռերդեք, կը մըթագնեք լո՞ւյս երազներն իղձերուս,
Ցրվեցե՛ք ալ, ու հեռացե՛ք, թողե՛ք, թողե՛ք զիս, հերի՞ք...

1939

# ԴՈՒՆ ԱԼ ԿԱՆՑՆԻՍ

Կյանքի բովեն դուն ալ կանցնիս,
Կանցնիս դուն ալ ժպտուն, տըխուր,
Ըմբոստ, խոնարհ, բայց պիտ անցնիս
Միշտ որոնող, ձգտումով լուռ...

Մեր իղձերը ա՛յնքան խո՜ր են,
Խո՜ր են այնքան և անհատակ,
Ծավալուն են անհուններեն,
Ու մերթ հուժկու, մերթ ընդարձակ...

Կան սրտիդ մեջ կայծեր արձակ,
Ու հոգիդ ալ հար թրթռուն,
Կյանքիդ կուտան վա՛ռ արեգակ,
Ու երանգնե՜ր քնքո՛ւշ, ժպտուն...

Կյանքի ճամբան տատասկ ունի,
Դյութանք ունի, սե՜ր ունի, չե՜ս
Գիտեր ուրկե, ինչպես կանցնի,
— Մրրիկն ի՜նչ փույթ, պիտ՝ նավարկես...

Պիտի անցնիս կյանքի բովեն,
Գուցե իղձերդ մեկ մեկ մարին,
Երազներդ ալ թող քեզ լքեն,
— Անցնիս պիտի բովեն կյանքին...

1936

# ԿԸ ՀԻՇԵՄ

Կը հիշեմ հիմա վայրկյաններն ըղձավոր,
Միասին էինք—ուշ չէր—դեռ երեկ,
Նստած դեմ առ դեմ անխոսկ ու ազատ,
Հույսը մեր սրտին և հույզեր բեկ-բեկ։

Ու մեր սրտերեն անզուսպ մրրիկներ
Կոհակներու պես փրփրով կանցնեին,
Կամ՝ սիրո կայծերն էությունը մեր
Կը հրդեհեին՝ բոցերով ուժգին...

Ու մերթ հոգեխռով՝ պինդ թևե՞րու մեջ
Կը վերանայինք սիրո խորանին.—
Չը կային հոն ցավ և ո՛չ տըխուր էջ,
Այլ, ո՜վ գարուններ մեղմ կը ժպտեին...

1931

# ԽՈՀԵ՛Ր...

Մըտածումներուս առանցքը կազմող ի՛նչ ուժ կա այսօր,
Ի՛նչ գաղտնիք է այդ. անթափանցելի, մութ աներեւոյթ,
Տարամերժօրեն կը ճնշե հոգիս, ծանըր, ահաւոր,
— Խոհե՛ր, խոհե՛ր, որքա՞ն անհարկու, դըժընդակ ու լուռ։

***

Աստղ մը սահեցաւ երկնակամարէն՝—ասուպ մը մաշած,
Լուսաշող աստղ մ'էր, որ միջոցին մէջ մարեցաւ հանկարծ,
Տերեւաթափ է, ծառերն ալ տըխուր հովերն աշնան,
Ծըծաններուն հետ կը սարսռերին ու կը հեկեկան...

***

Ու ես խոհերով բեռնաւորուած դեռ կեցած եմ լռին
Սփինքսին դիմաց, թափանցելու իր միստիք գաղտնիքին։
Օ՜... կեանքն է սա, խորհրդաւոր այդ էակն աշխարհի,
Թէ՛ հըզօրներէն հըզօր՝ էգ արքա, թէ՛ սարո՞ւկ հոգի...։

1951

# ԱՌԱՆՁՆՈՒԹՅԱՆ

Առանձնության մեջ խաղա՜ղ, կուզեմ խոկալ ու երկնել,
Հոգիս՝ մտքիս է նեցուկ՝ կեդրոնը հո՛րդ հույզերուն,
Առանձնության մեջ արտում, երբ ան չուզեր բաբախել,
Միտքըս իզո՜ւր կը ճգնի երգել տաղեր վառ, եռուն։

Երկունքները գերհըզոր՝ ծնունդը մե՜ծ խորհուրդին,
Լոկ ուղեղը անզոր է, ստեղծելու գործ մեծղի՜,
Երբ հույզերը կը պակսին զգացումի կեդրոնին,
Համառորեն տառապող միտքը շիթ շիթ կը հատնի՜...

Առանձնությո՜ւն գերագույն, կայծերը տո՜ւր հոգիիս,
Զի քընարը ձեռքիս մեջ բեկ բեկ տակավ կը մաշի,
Առանձնություն դու վըսեմ, տո՛ւր, հույզե՜ր տո՛ւր հոգիիս,
Որ ես երկնեմ գերագույն տաղերն անմա՜հ խորհուրդին...։

1936

# Իղձ

Կուզեմ, կուզեմ որ ամենն ալ ժպտին,
Թո՛ղ ծաղկին իղձեր հույսեր հորդանուշ,
Տակավին կուզեմ, որ սիրո քնքուշ
Զգացումներ հար փթթին կաթոգին։

Կամ ռազմի երգեր թո՛ղ գոռան ուժգին,
Ուժգին և՛ հզոր, և՛ դյուցազնական,
Բայց չլլան անոնք չարանենգ դաժան,
Այլ ազատության հուրով համակվին։

Ու դեռ կուզեմ, որ զըվարթ թևածեմ
Ու անկարգելով նետվիմ եթերին,
Եղբայրական ցո՜լք մ՚իբրև հո՛րդ վըսեմ։

Օ՜, ի՜նչ վեհ տենչեր թերթ թերթ տակավին,
Կը ծաղկին սրտիս խորո՜ւնկ ալքերեն,
Կենսաժըպիտով բազմերանգ նրբին։

1940

# ՍԱԼԱՄԻՆԱ

Պատմութիւնը տըւեր է քեզ փառապըսակ ու դափնի,
Ծովհատակիդ դեռ կը հանգչին բեկորները Թշնամի
Նաւատորմին, իսկ այժմ ալ լուրթ ծոցիդ մէջ կը խընամեն,
Դիւցազնական Հելլադայի նաւատորմը՝ մո՛ր մը պէս։

Ցից լեռներուդ գագաթներն լերկ՝ մի՛շտ կը հառին դէպ՝ կապոյտ,
Ու հիմնըւած սիրուն գիւղեր արեւելեան ափերուդ,
Ուր Սելինյա՛ն, Ամպելա՛քի, Քամաթե՛րօ, Բալո՛ւքյան
Եւ Քուլո՛ւրին, շուշանաթոյր՝ հընադարեան հուշարձան։

Ձկնորսներդ պիրկ առագաստով՝ զերդ աղկիններ՝ միշտ կ'որսան,
Ու խաղողէդ կը պատրաստեն գինեփրփուր ռէչինան,
Զոր կը խմեն զաւակներդ և՛ մարտունակ, և՛ զըւարթ։

Դիւցա՛զն կղզի՝ Ատտիկէն անթարթ միշտ կը հսկէ քու վըրադ՝
Արեւելքէն և հիւսիսէն գորգուրանքով խանդակաթ,
Արեւմուտքէն՝ Կորնթոսեան աստուածները հընաւանդ։

1930

# ԴԱՇՏԻ ԱՂՋԻԿԸ

Գանցնի ղալարուն արտերէն հըպարտ,
Ջրահետներէն դանդաղ քայլերով,
Դաշտի աղջիկ է, քնքուշ, հարազատ,
Նա աղբյուր կերթա արձակ ժամերով։

Ալրիւյան բույրով օծո՛ւն իր հոգին,
Ծաղիկներու մէջ, ծաղի՛կ մը ինքն ալ,
Խասուն պատկեր է՝ սափորը ուսին,
Ու երգի մը պես դյութի՛չ, հոգեզմայլ։

Մեղմանուշ հով մը հըպելով անցավ,
Գարնան հեշտածոր դաշտանվագով,
Դաշտի աղջիկը աղբյուրեն դարձավ,
Կույսի ժըպիտով, սիրո՛ն նազանքով։

1936

## ՀՈԳԻՍ ՄԱՏԱՂ, ՋԱՆ ԱՂՋԻԿ

Էլ-Սամանի սերը ունիմ քեզ համար՝
Հոգիս մատա՜ղ նազանքներուդ, ո՜վ աղջիկ,
Սփռեմ վարդեր ու շուշաններ անհամար,
Հավերժական է իմ սե՜րը, չա՛ր աղջիկ։

Դալար սիրտըս մշտաբաբախ խըռով լին,
Իմ օրերը սև մի՛ ըներ, ա՜յ աղջիկ,
Ինձ մի՛ տանջեր բյուր վիշտերով մորմոքիչ,
Մատա՜ղ քեզի, ա՛ռ իմ հոգիս, տա՛ր աղջիկ։

Ես դարտ ունիմ, նոր դարտերով մի՛ խոցեր,
— Սոխակները թո՛ղ միշտ երգեն, դայլայլեն,
Եվ աշուղներ գովքըդ հյուսեն տարիներ,
Ու քեզ համար բուրաստաններ թո՛ղ ծաղկին։

Քուրմի նըման Խայեամ պաշտեց վա՜ռ գինին՝
Աշուղ եղա՝ զերդ Էլ—Սաման դըխտեցի,
Պաշտել քեզի սիրով անշեջ կաթոգին,
Դուն նըման ես գարնան անուշ զեփյուռին։

Սարեր, ձորեր ես ման եկա անդադար,
Յարկիդ, սումբուլ քեզ փունջ բերի վա՛ռ աղջիկ.
Սև աչքերուդ, նազանքներուդ հըրավառ,
Հոգի՜ս մատաղ, ընդունե՛ զայն, ջա՛ն աղջիկ։

1939

# ՍԻՐԵՐԳ

*Ծնուշիկ աղջիկ, սև մութ աչերով,*
*Սիրեցի ես քեզ, շըլլաս դուն անգութ.*
*Աչերդ են բոցեր՝ սրտիդ հայելին,*
*Կիզիչ շրթներուդ հո՛ւրը ես ծծեմ...*

*Անունըդ Զմրուխտ և ինքդ ալ հակինթ,*
*Սիրեցի քեզ ես աղջի՛կ ժպտասիրտ,*
*Սևաթո՛ւյր վարսերդ ոլորեմ ճակտիս՝*
*Դափնի մը իբրև սիրույս գերագանց։*

*Քընարս սիրերգով՝ տաղե՛ր բոցանուտ,*
*Ալեկոծ հոգվույս երգերը վըսեմ,—*
*Հորդուն բաժա՛կը, արբեցա՛ծ սրտիս,*
*Ցիրավառ տենչով երգեմ պիտի ես...*

1931

# ԵՐԹԱՆՔ, ԱՂՋԻԿ

*Մեր հին գյուղը երթանք, աղջիկ,*
*Կաթ ու պանիր տամ քեզ, աղջիկ,*
*Բուրումնավետ մեղր ու կարագ,*
*Եվ աղբյուրի ջուր տամ, աղջիկ։*

*Մեր արտերը երթանք, աղջիկ,*
*Հունձքի դեզեր կապեմ, աղջիկ,*
*Ու մեր զըվարթ արշալույսին,*
*Գյուղի ժպիտ տամ քեզ, աղջիկ։*

*Մեր պարտեզը երթանք, աղջիկ,*
*Քեզ ծաղիկներ քաղեմ, աղջիկ,*
*Վարդ ու մեխակ, հասմիկ, շուշան,*
*Արևավառ գարնա՛ն աղջիկ։*

*Մեր լեռները երթանք, աղջիկ,*
*Մեզ ու դալար՝ սիրուն աղջիկ,*
*Առճիներու շուրջին նստած,*
*Մեր սերը հո՛ն, երգենք, աղջիկ։*

1933

# ԵՍ ԿԸ ՍԻՐԵՄ

*Ես կը սիրեմ կյանքը ազա՜տ,*
*Իղձերը բո՜րբ, համայնական,*
*Ծըպլխաներն ալ վա՛ռ, հարազատ,—*
*Զգացումներն անե՜ղծ ու՛յնքան։*

*Կը սիրեմ ես քրտինքը տաք՝*
*Աշխատանքի հուրով վառված,*
*Ու բազուկներն մշտաքանդակ*
*Եվ միտքերն ալ՝ պայծառ ու զա՜նձ...*

*Ու կը սիրեմ պա՜րզ հոգիներ,*
*Ակնարկներն ալ աննեգ ու վառ,—*
*Եռուն կյանքի զըվարթ երգեր,*
*Կամ հուշերն այն, որոնք չեն գար...։*

1935

# ՄՏԱԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

Ընկղմանած խոր մութին, մտաթափառ կը հածիմ,
Բոլոր դէմքերն ու դէպքերն՝ հոս հոն ինծի մտերիմ,
Կենդանութեամբ վերստին կը հայտնուին ինձ կրկին,
Ու ծանօթներ վաղեմի, կը տեսնեմ արդ մօտովին...

Ու, հին թէ նոր, ամէնն ալ մտերմօրէն կը ժպտին,
Կընտելանան մէկ առ մէկ, կինոֆիլմի պէս կանցնին,
Քանդակելով հոգւոյս մէջ բոլորավոր խո՜ր ակոսներ՝
Ուր անթեղված ի՜նչ հույսեր, որքան կրակ, որքան սէ՜ր...

Մտաթափառ կը հածիմ ուղիներէն դեռ մթին,
Ուր վիշտերն ալ թեւաբաց՝ կը համառին տակավին,
Ու սիրելի ի՜նչ դէմքեր՝ անդրաշխարհէն կը ձայնեն...

Ա՛լ կը սթափիմ, կանգ կառնեմ ձերբազատված խոր մութէն,
Աչքերս լույսին կը բացվին, հանկարծօրէն կը պարզվին
Իրերն ալ՝ մութ տեսիլներ տակավ մէկ-մէկ կանհետին...

1949

## ԱՆՈՐ՝ ՈՐ ՀԱԶԻՒ ԻՐ ՓԹԹՈՒՄԻՆ ԿԸ ՄԱՐԻ

*Հիւծախտէն մեռնող երիտասարդներուն*

Աչքեր վրան սեւեռուն՝ գորովալից, գուրգուրոտ,
Կը խընամեն բերկրագին, զոհողութեամբ խանդակաթ,
Տակաւ զերդ ծառ կը ծաղկի, դալարագեղ, արեւոտ,
Ուրախութի՜ւն ու ծիծա՜ղ կը տարածուին հոն առատ։

Կը բողբոջի, կը ժպտի՝ երազելով, երգելով
Սիրտը սիրոյ կը փթթի, կը բաբախէ, կը հեծէ,
Մե՜ծ խոյաններ կօրօրէ հո՛րդ աւիշով, վա՛ռ միտքով.—
Կեանքը իրեն տակաւին երանգաւոր լո՜յս մըն է...։

Ընձիւղումին հետ անոր, սիրտեր յոյսով կը լեցուին,
Ու երազներ կը հիւսուին՝ ապագային վարդագոյն,
Բայց փթթումին մէջ հանկարծ՝ տապը զերդ իժ իր կրծքին
Կը խըլըրտի թո՜յն ցըրած՝ կը փըսխէ թո՜յն ու արի՜ւն..

Ախտը տակաւ մահաշունչ՝ կը ճնշէ ու կը հիւծէ,
Դալկատեսիլ՝ զերդ կըմախք՝ աչերն փոսին մէջ ինկած,
Սիրտը մոխիր, յուսահատ իր հատնումի՜ն կը սպասէ...

Ու մինչ կի՜ջնէ նի՜նջը խոր՝ անխըռով ու վեհապա՜նծ,
Ա՛լ ամէն ինչ կը ցընդի՝ յոյս ու երազ եւ ծիծաղ,
Ու կը պատէ սուգ, արցունք՝ լոկ տապան մը, լո՜ւռ, խաղա՛ղ...։

19 8

Ժողովրդական

# ԵՍ ՄԱՆ ԿՈՒԳԱՄ ՍԱՐԵՐԸ

*Սարեր, ձորեր ու ծաղիկներ,*
*Իմաց տվեք իմ յարիս.—*
*Ես վառ տըղա, ես սե՛գ տըղա,*
*Տըխուր անցա այս տեղեն։*

*Ըսե՛ք իրեն, որ գիս տեսաք*
*Թաց ու խոնավ աչքերով,*
*Իմ սազին հետ հոգեզուրգված,*
*Ճանապարհներ եմ ինկեր։*

*Ես ման կուգամ այս դաշտերը,*
*— Թե՛ անծանոթ, թե՛ թովիչ —*
*Ու կը պատմեմ գաղիր դավեր՝*
*Նյութված մարդեն, մարդուն դեմ։*

*Մատաղ ըլլամ հովիվ աղբեր,*
*Ըսե ինծի իմ յարը,*
*Տեսա՞ր արդյոք, ուրկե՞ անցավ*
*Իմ սևաչյա սեգ յարը։*

*Ես լըքեցի ճոխ քաղաքներ*
*Հազարամյա ու ծըխոտ,*
*Սազըս առի ճամբա ելա*
*Դալարագեղ հովիտներ։*

Հազար ողջո՜ւյն կույս մարգերուն,
Մացառներուն, ծառերուն,
Եվ բյուր ողջո՜ւյն Թռչուններուն,
Առվակներուն կարկաչուն։

Երգըս հիմա՝ բորբ ու արձակ,
Ազատ՝ ղազիր ղավերեն,
Ու ընկերներս՝ ծառ ու ծաղիկ,
Ձեզծ են բոլո՜ր խոհերեն։

Հազար երնեկ, սիրուն եղնիկ,
Ըսե՛, տեսա՞ր իմ յարը.—
Ես վառ սըրտա, ես հե՜ք սըրտա,
Սիրտըս անվերջ կարյունի...։

# Շատ Մի՛ Տրտմիր

*Դժբախտության այս օրերուն,*
*Շատ մի՛ տրտմիր, ո՛վ բարեկամ,*
*Չի կանցնի այս ալ՝ զերդ աշուն,—*
*Կյանքը այդպես է շատ անգամ։*

*Թախծին հետո՝ ժպիտ կուգա,*
*Արցունքին վերջ՝ ուրախ երգեր,*
*Ցավի մեջեն դեպ՝ ապագա*
*Հույսի՜ն պիտի նայինք մենք դեռ...*

*Կյանքը՝ հո՜ւյս է, երանգավոր*
*Հեռապատկեր՝ շուտ կը մոռնաս*
*Ցավը տրժգույն ու սրգավոր,*
*Ու դուն կրկին հույսով կերթաս...*

1935

## ՀԵՌԱՑԵՔ, ԱՄՊԵՐ

Մռայլ, սե՜վ ամպեր, հեռացե՛ք խաղաղ,
Պայծառանա թո՛ղ հորիզոնը մութ,
Լուսին ու աստղեր շողա՜ն մշտավառ,
Դյութե երկինքը՝ տեսիլքովն իր լուրթ։

Վերադառնա թո՛ղ գարո՜ւնը ծաղկուն
Դաշտերն վերստին թո՛ղ հագնին դալար,
Ծառեր թո՛ղ ծաղկին՝ միրգով ակաղձուն,
Եվ առվակներն էլ գլգլան մեղմալար։

Թո՛ղ անհնարին և օրերն անհարկու,
Իրենց բյուրավոր վիշտերով դաժան,
Եվ դարերին բոլոր բուերն ողբերգու,
Ու դայլայլե թո՛ղ սոխակը գարնան։

Ու խաղաղության քնարովն արբշիռ,
Սիրո նոր երգը թող հնչե թովիչ,
Կյանքը թող խայտա ժպիտով լիալիր,
Եվ աշխարհ ըլլա հավե՜տ հանկուցիչ։

Հեռացե՛ք ամպեր, ա՛լ մի՛ կուտակվիք,
Լազվարթ կապույտը կրկին վայելենք,
— Սափորդ առ, աղբյուր գնա՛ դու, քույրիկ,
Որ շուտ ողջունենք Մայիսը երնե՜կ...

1939

# ԽՈՍՏՈՒՄ

Պարպըվա՞ծ եմ ես արդյոք, դեռ չը հորդած հոսանուտ,
Ճամբուս վըրան խութերը չարյունոտած, չը ցըրված,
Հեղեղատին պես ամեն կածանները դեռ չավրած,
Ու պարտասո՞ւն իսկապես, ո՛րքան կանուխ, ո՛րքան շուտ...

Բայց ի՞նչ կըսեմ, ճնշի՞չ է պահն այնքան, մինչ աղվալույս
Հո՛ւրն հոգվույս նոր կը գեղու՝ արևի՞ պես լուսարձակ,
Երևույթներն բազմիմաստ հարցականին ինկած տակ,
Նոր երանգնե՞ր կսպասեն, նո՛ր իմաստնե՞ր, ու նոր հո՞ւյզ...

Օ՜ ո՛չ, ո՛չ, չե՛մ պարտասուն նախաքայլես մինչև արդ,
Կանգնած ահա՛ կը դիտեմ ուղիները հեռավոր,
Պիտի հասնիմ ես խիզախ հանգըրվանին օրն օր,
Ձի կը հոսի ավյունն դեռ երակներես հորդառատ։

Զարտասանված ի՞նչքան խոսք, ու չերգըված ի՞նչքան դող,
Լուռ կը մաղվին, կը հնչեն, ու կը մըխան հոգվույս մեջ,
Պիտի ցոլան տենդավառ զերթ քերթվածներ էջ առ էջ,
Ներաշխարհես դեպի դո՞ւրս, դեպի աստղե՞ր մշտաշող...

1939

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

1) Հեղինակի կողմից . . . . . 2
2) Առաջնորդին . . . . . 5
3) Մայր Հայաստան . . . . . 6
4) Սեմին վրա . . . . . 7
5) Հայրենիք վերադարձողներուն . . . . . 9
6) Նկանք . . . . . 11
7) Հայրենի հողին վրա . . . . . 12
8) Երջանկության արցունքները . . . . . 13
9) Սպիտակ ծառեր . . . . . 14
10) Լուսապատկեր . . . . . 15
11) Հայ ժողովրդին . . . . . 16
12) Հայրենի գարուն . . . . . 17
13) Վերածնվող Հայաստանին . . . . . 21
14) Մեծ գալիքը . . . . . 22
15) Հուր չեմ հայցեր մասային . . . . . 23
16) Վերհիշում . . . . . 24
17) Վերադառնալ . . . . . 26
18) Բախտակից սերունդին . . . . . 27
19) Հպումդ . . . . . 28
20) Դանիել Վարուժան . . . . . 29
21) Մութ ժամեր . . . . . 30
22) Ամեհի դու ալիքներ . . . . . 31
23) Ո՞ւր ես դուն, . . . . . 32
24) Պատգամներ . . . . . 33
25) Մենության խուցես . . . . . 34
26) Երազներուս դիցուհին . . . . . 35
27) Գոհություն . . . . . 36
28) Բաշնիկը երազիս . . . . . 37
29) Արև . . . . . 38
30) Ցայտ աղբյուրին առջև . . . . . 39
31) Եղբոր մը պես, մոր մը պես . . . . . 40
32) Կը տաղերգեմ լոկ . . . . . 41
33) Հելլադա՛ . . . . . 42
34) Աշխատանքը . . . . . 43
35) Հերը . . . . . 44
36) Ես ինծի հետ . . . . . 45
37) Կուզեմ վերապրիլ . . . . . 46
38) Որմնադիրը . . . . . 47

39) Խռովք . . . . . . . . . 48
40) Փախուստ քաղաքներէն . . . . . 49
41) Պահ հաճախանքի . . . . . . . 50
42) Այս գիշեր . . . . . . . . . 51
43) Թերատավերներ . . . . . . . 52
44) Ահավոր ուրվականը . . . . . . 53
45) Լուսնենե հետո . . . . . . . 54
46) Ահազանգը . . . . . . . . . 55
47) Խոր գիշերներ . . . . . . . . 56
48) Արհեստավոր բանվորները . . . . 57
49) Հավատքի վառ երազ . . . . . . 58
50) Փոթորիկը . . . . . . . . . 59
51) Տեսիլ . . . . . . . . . . 60
52) Կուզեմ . . . . . . . . . . 61
53) Ցայգերգ . . . . . . . . . 62
54) Աշնան մեղեդի . . . . . . . 63
55) Լուռ կսկիծ . . . . . . . . 64
56) Դուն ալ կանցնիս . . . . . . 65
57) Կը հիշեմ . . . . . . . . . 66
58) Խոհե՞ր . . . . . . . . . . 67
59) Առանձնություն . . . . . . . 68
60) Իղձ . . . . . . . . . . . 69
61) Սալամինա . . . . . . . . . 70
62) Դաշտի աղջիկը . . . . . . . 71
63) Հոգիս մատաղ քան աղջիկ . . . . 72
64) Սիրերգ . . . . . . . . . . 73
65) Որթանք աղջիկ . . . . . . . 74
66) Ես կը սիրեմ . . . . . . . . 75
67) Մտաթափառումներ . . . . . . 76
68) Անոր՝ որ հազիվ իր փթթումին կը խամրի . . . 77
69) Ես ման կուգամ սարերը . . . . . 78
70) Շատ մի՛ տրտմիր . . . . . . . 80
71) Հեռացե՛ք ամպեր . . . . . . . 81
72) Խոստում . . . . . . . . . . 82

Պատ. խմբագիր Ս. ՏԱՐՈՆՑԻ
Տեխ. խմբագիր Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՖ 03242։ Պատվեր 313։ Տիրաժ 3000։ Տպագրական 5¹/₄ մամ.։ Հեղ 2 մամ.
Հանձնված է արտադրության 19/V—1947 թ.
Ստորագրված է տպագրության 30/VIII—1947 թ.։

ՀԱՍԽ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատարակչությունների
Վարչության № 3 տպարան, Ալավերդյան № 65, Երևան, 1947 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220027357

Գինը 5 Ռ.

A II/27357